«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐ 2

ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ

ԱՌԱՔԻՆԻ ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆ

(Հոգեւոր զրոյցներ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Սրտի Խօսք Յովնան Սրբազանի	5
Մուտք	7
Բարի կենցաղավարութեան եւ առաքինի կեանքի մասին	10
Այն մասին, որ բարիք գործելը չպէտք է յաջորդ օրուան թողնել	17
Այն մասին, որ զանազան փորձութիւնները չեն կարող խափանել առաքինութեան ընթացքը	23
Այն մասին, որ եթէ առաքինութիւնից որեւէ բան պակաս լինի, տէրը մարդուն դուրս կթողնի արքայութիւնից	28
Դժոխքում սպասուող տանջանքների ստուգութեան մասին	31
Խեղկատակութիւնները անպատեհ են քրիստոնեայի համար	36
Այն մասին, որ պէտք չէ այլոց անկման կամ անյաջողութեան վրայ ուրախանալ	39

Նրանց մասին, ովքեր արտաքուստ քրիստոնեայ են, իսկ ներքուստ՝ սատանայ 42

Յուսադրութեան, օգնելու եւ փորձանքի մէջ ընկածներին մխիթարելու մասին 47

Երաշտի եւ այլ պատուհասների ժամանակ աղօթելու մասին 52

Ծովով եւ ցամաքով ճանապարհորդողների համար աղօթելու մասին 57

Բոլոր վշտացեալների եւ հիւանդների առողջութեան համար փութով Աստծուն աղօթելու մասին 60

Որքա՜ն հաճելի է Աստծուն, երբ մէկը մեծ է կոչումով, բայց ծառայում է այլոց 64

Պարսաւելի ու երկար-բարակ շատախօսութեան մասին 70

Աշխատանքի օգտակարութեան եւ ծուլութեան վնասակարութեան մասին 73

Ընկերների եւ ընտանիքի փրկութեան համար հոգ տանելու մասին 77

Այն մասին, որ որեւէ մէկին չպէտք է գայթակղեցնել, նաեւ այն մասին, թէ որքան չարիք է պատճառում գայթակղութիւնը աշխարհում 82

Ո՞վ կարող է երջանիկ համարուել, եւ
երջանկութեան քանի՞ տեսակ կայ 87

Այն մասին, թէ այր ու կին
ինչ յատկանիշներ պիտի ունենան 92

Տղամարդուն եւ կնոջը՝ թէ ինչպէս
պէտք է իրար սիրեն 96

Համեստութիւնը բոլոր յատկութիւնների
զարդարանքն ու փառքն է 104

Այն մասին, որ եթէ մէկն անձամբ
կարող է հոգալ իր փրկութիւնը,
չպէտք է այն այլոց թողնի 109

Ծանօթագրութիւններ 115

ՍՐՏԻ ԽՕՍՔ

«Առաքինի կեանքի ուղին» տիտղոսագրուած այս գրքոյկի մտայղացքը նախաձեռնութիւնն է Տիար Նորայր Պօղոսեանի, որ իր հերթին «Ոսկեղենիկ» մատենաշարի 2-րդ պրակն է: Կ. Պոլսոյ Պատրիարքական գահին բազմած ակնառու դէմքերէն Ամենապատիւ Յակոբ Նալեան Պատրիարքի գրչին արգասիքը հանդիսացած գրութիւնները աշխարհաբարի թարգմանութեամբ կը ներկայանան որպէս հոգեւոր սնունդ հայ հաւատացեալ քրիստոնեային:

Յիրաւի, երբ կ'ընթերցենք խրատականները, կարծէք ակամայից մեր հոգիին խորքէն կը լսենք Ս. Պատարագէն մեզի հասնող շարականին քաղցրահնչիւն հրաւէրը. «*Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր, զի յաւիտեան է ողորմութիւն նորա*»:

Խրատականները, որոնք առանձինն ենթավերնագրերով են ներկայացուցած հեղինակին կողմէ, հարուստ են հայրերու գրութիւններէ քաղուած մէջբերումներով: Կարծէք բոլոր խրատականները կը միտին մեզ մօտեցնելու Աստուծոյ:

Աստուածսիրութեան կոչերու հաւաքածոյ մը ըլլայ կարծէք «Ոսկեղենիկի» այս երկրորդ հրատարակութիւնը՝ «Առաքինի կեանքի ուղին» վերնագրուած: Այստեղ կարելի է ցուցակագրել պատ-

գամներու ամբողջական շարք մը: Կը բաւարարուինք մի քանիսին անդրադառնալով միայն.

«Այն ընծան, որի մէջ խոնարհ սիրտ չէ դրուած, ոչինչ է:

Մեղքն էլ դժոխքի հուրը բորբոքող նիւթն է:

Մարդու հաւատքն այնքան է, որքան նրա գործերն են...»:

Իւրաքանչիւր խրատական իրօք մեր կեանքը կատարեալին առաջադրող ու բարձրացնող դուռն մըն է: Ընթերցենք եւ ըմբոշխնենք, որպէսզի առաքինի կեանքի մը ձգտումով ապրինք իւրաքանչիւրս մեր կեանքը:

Մեր ջերմ գնահատութիւնը Տիար Նորայր Պողոսեանի եւ մասնակիցներուն, հոգին սրբութեամբ զարդարող խրատականները հաւատացեալներուն տրամադրելի դարձնելու ձգտումին համար:

Տ. Յովնան Արք. Տէրտէրեան
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի
Արեւմտեան Թեմի
Ապրիլ 2, 2020

ՄՈՒՏՔ

Սիրելի՛ ընթերցող, քո սեղանին է դրւում ԱՄՆ Արեւմտեան թեմի «Ոսկեղենիկ» մատենաշարի նոր պրակը: Թեմի Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի օրհնութեամբ հիմնադրուած մատենաշարի առաջին հատորը՝ Ս. Յովհան Ոսկեբերանի քարոզների ժողովածուն «Առաքինութեան պտուղներ» խորագրով, լաւ ընդունելութիւն եւ դրական արձագանքներ ունեցաւ, որ քաջալերական եղաւ՝ այս կերպ շարունակելու ընթերցողին ներկայացնել հոգեւոր գրականութեան հին ու նոր ոսկեղենիկ էջեր, գրաբարից փոխադրուած աշխարհաբար:

Նոր հատորն ամփոփում է Յակոբ Պատրիարք Նալեանի (1706-1764 թթ.) «Գանձարան ծանուցմանց» գրքի քարոզներ, որոնք գրաբարից աշխարհաբար են թարգմանել Ս. Էջմիածնի Գեւորգեան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի սաները՝ մեր յանձնարարութեամբ եւ խմբագրութեամբ:

Յակոբ Նալեան Զմմարացին (1706-1764) հայ հոգեւոր ու մշակութային երեւելի ներկայացուցիչներից է, յայտնի մատենագիր եւ մեկնիչ, եղել է Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1741–49 եւ 1752–64), Երուսաղէմի Հայոց պատրիարք (1749–52), Նարեկի առաջին մեծ մեկնիչներից է եւ բազում

այլ գրքերի հեղինակ (ցանկը տե՛ս գրքի վերջում): 1758 թ. տպագրուած «Գանձարան ծանուցմանց»-ը քարոզների ժողովածու է, որի բնոյթի մասին առաջաբանում խօսում է ինքը՝ հեղինակը. «*Գիրքն ուսուցանէ զաւագ իրիցունս եւ զամենայն քրիստոնեայս եւ զքարոզիչս զոչ կրթեալսն ի դպրատան, յորում գտանին հարկաւոր ուսանելիք եւ առնելիք բարոյականք*»:

Յ. Նալեանի այս քարոզները անկեղծ զրոյցներ են օրինակ այն մասին, թէ ինչպէս զանազան փորձութիւնները չեն կարող խափանել առաքինի մարդու աստուածահաճոյ ընթացքը, թէ նուիրաբերուող ընծայի մէջ պէտք է խոնարհ սիրտ դնել, փառքի պէտք է ձգտել՝ դրանից փախչելով, եւ, ի վերջոյ, պէտք է առաքինութիւնն ընտրել որպէս երկինք տանող սանդուղք: Յակոբ Նալեանի երկերը թեւաւոր խօսքերի շտեմարան են.

-Համեստութիւնը լոյս է, որ ցոյց է տալիս առաքինութեան բոլոր գոյները:

-Երբ սեղան գցես, հարուստներին ու հպարտներին մի՛ կանչիր, այլ աղքատներին եւ սուրբերին, որոնք Աստծոյ օրհնութիւնը ոտքի փոշու հետ տուն կբերեն:

-Այսօրուայ օրը շատերը տալիս են սատանային, իսկ Աստծուն խոստանում են վաղուայ օրը:

-Առաքինութեան ճիւղերը քրտինքով եւ աշխատութեամբ են ծլարձակում:

-Ո՛չ աղքատութիւնը, ո՛չ գերութիւնը եւ ո՛չ մի այլ պատահար չեն կարող կանխել առաքինի մարդուն իր ընթացքից:

Գիտութիւնները առաջ են գնացել, բայց քրիստոնէական բարոյականութիւնը, կատարեալի ձգտումները նոյնն են թէ՛ առաջ, թէ՛ Նալանի ժամանակներում, թէ՛ մեր օրերում. «Կատարեալին ձգտումը առաքինութիւն է» (Տ. Յովնան Արք. Տէրտէրեան): Ուրեմն՝ արդիական են նրա գրուածքները, որ քրիստոնէական անանց արժէքներ են սերմանում, նաեւ առիթ են վերստին ծանօթանալու մեր մեծ մտածողներից մէկին, նորովի շրջանառութեան մէջ դնելու նրա երկերը:

Յակոբ Նալեանի քարոզների ներկայ ժողովածուի մէջ ընդգրկուած հատուածները մէկ ընդհանուր բովանդակութիւն ունեն, դրանք առաքինութեան ուղին են մատնանշում ամենքիս համար, եւ հէնց այդպէս էլ վերնագրել ենք պրակը՝ «*Առաքինի կեանքի ուղին*»:

Վստահ ենք, որ Յակոբ Նալեանի քարոզների նոր այս հրատարակումը կարող է սնուցել 21-րդ դարի հայ քրիստոնեայի միտքն ու հոգին: Եւ մեր սիրելի ընթերցողին մաղթում ենք բարի եւ առաքինի խորհրդածութիւններ Յ. Նալեանի հոգեւոր աշխարհում շրջածելիս:

Նորայր Պօղոսեան
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԲԱՐԻ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՔԻՆԻ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թալէս իմաստասէրին[1] հարցրին, թէ ինչպէ՞ս մարդը դիմանայ ու յաղթահարի չար բախտը: «Եթէ չարաբախտութեան մէջ տեսնի թշնամիներին»,- պատասխանեց նա: Հարցրին կրկին, թէ ինչպէ՞ս է պէտք բարի կեանքով ապրել, ասաց. «Չպէ՛տք է գործենք այն, ինչի մէջ որ ուրիշներին ենք մեղադրում»:

Նոյնն է ասում մեր Տէրը. «Ինչո՞ւ քո եղբօր աչքի շիւղը տեսնում ես, բայց քո աչքի գերանը չես տեսնում» (Մատթ. Է. 3): Ինչպէ՞ս ես յանդիմանում եղբօրդ, այն էլ ներելի՛ մեղքերի համար, երբ խուսափում ես քո մահացու մեղքերը տեսնելուց, որ խրուել-մնացել է հոգուդ աչքում:

Նոյնը հրամայում է մեզ եկեղեցին՝ ասելով. «Ուղի՛ղ ապրէք, բարութեամբ ապրէք»:

Ուղիղ ապրել՝ նշանակում է անկեալ խորհուրդները վերստին ուղղել եւ աշխարհիկ իրողութիւններից ծնուած յուսալքումը հեռու վանել:

Բարի կենցաղավարութիւնը ոչ թէ փայլփլուն զգեստների մէջ է, այլ պայծառ վարքի, մարդու ներքինի, որը երեւելի է Աստծոյ աչքին, ինչպիսին էին Նոյը, Աբրահամը, Յոբը եւ բոլոր ընտրեալները:

---

[1] Թալէս Միլետացի (Ք. ա. 640 – 546 թթ.) – անտիկ յոյն փիլիսոփայ, մաթեմատիկոս, աստղագէտ, եօթ իմաստուններից մէկը:

Նոյնպէս եւ Զաքարիան եւ Եղիսաբէթը, որ արդար էին ու անարատ ապրում էին Տիրոջ առաջ: Ասւում է «Տիրոջ առաջ» եւ ոչ «մարդկանց աչքում», քանզի Աստուած նայում է սրտին, իսկ մարդը՝ երեսին, ինչպէս ասում է Սամուէլը Դաւթի համար:

Թալէսն ասաց. «Ձեր երեսները մի՛ պաճուճէք զարդարանքով, այլ ուսմամբ զբաղուէք, քանզի դա է բարի»: Այսինքն՝ **ոչ թէ մարմնի երեսը, այլ մտքի՛ երեսն է պէտք գիտութեամբ զարդարել,** քանզի առաջինը անբանների երեսն է, իսկ երկրորդը՝ բանականներինը, եւ դրանք ներհակ են իրար:

Շքեղաբար զարդարուած Կրէսոսը[2] հարց տուեց Սոլոնին[3]. «Ինձանից աւելի գեղեցիկ մէկին տեսե՞լ ես»: Սոլոնը պատասխանեց՝ «Տեսել եմ սիրամարգերի, փասիանների, որոնք բնակա՛ն գեղեցկութեամբ են զարդարուած»: Իսկ Դիոնիսիոս[4] բռնաւորը հարցրեց Արիստիպոսին[5], թէ տեսե՞լ է

---

[2] Կրէսոս (Ք.ա. 595-546 թթ.) – Փոքրասիական Լիդիա պետութեան վերջին թագաւորը: Մովսէս Խորենացին պատմում է, որ Կրէսոսին պարտութեան է մատնել եւ գերել Հայոց Արտաշէս Ա. արքան, հրամայել է սպանել, բայց յետոյ ներում է շնորհել:

[3] Սոլոն (Ք.ա. 638 – 558 թթ.) - Աթէնքի յայտնի պետական գործիչ, օրէնսգիր եւ բանաստեղծ: Հին Յունաստանի եօթ իմաստուններից մէկը:

[4] Դիոնիսիոս I Աւագ Սիցիլիացի (Ք.ա. 406 – 367 թթ.) - Սիցիլիա կղզու հարաւ-արեւելքում հին յոյների հիմնած քաղաք-պետութեան տիրան:

[5] Արիստիպոս – անտիկ յոյն փիլիսոփայ (Ք.ա. 435 – 356 թթ.), Սոկրատէսի աշակերտը:

իրենից աւելի գեղեցիկին: Արիստիպոսը պատասխանեց՝ «Եթէ քեզնից առաւել գեղեցիկը լինէր, քեզնից առաւել զգեստաւորուած կլիներ»:

Առաջին ծնողները դրախտում սկզբնական արդարութեամբ էին զարդարուած եւ մարմնական զարդերի կարիք չունէին: Բայց յետոյ մեղքից պատժուած՝ ստիպուած եղան մարմինը ծածկել մորթով, մինչդեռ հիմա դա կրում են որպէս փառքի նշան: Այսպէս նաեւ ականջի գինդերը ի սկզբանէ ընդդէմ թովչութեան էին կախում (որպէսզի կախարդանք չթափանցէր այդ գինդերը կրողների մէջ), այժմ սակայն այս ամէնի փոխարէն սնափառութիւնն է բազմել գահին:

Ոսկեբերանն իր ՀԱ ճառի մէջ ասում է. «Ո՞վ է աւելի փառաւոր, նա՞, որ փառքի է ձգտում, թէ՞ նա, որ փախչում է փառքից: **Այլ կերպ հնարաւոր չէ հասնել փառքի, եթէ ոչ դրանից փախչելով**»: Ուրեմն եթէ կամենում ես փառաւորուած լինել՝ փառքի մի՛ ձգտիր:

Ով հարսանիքի ժամանակ նստում է վերջին տեղում, առաջ է հրաւիրւում, իսկ նա, ով առջեւում է նստում, յետ կտարուի, մէկը ունեցածից կզրկուի, միւսը՝ չունեցածը կշատացնի: Չի կարող որեւէ մէկը բարեկեցիկ եւ իմաստուն լինել, եթէ հոգու մեղքերը չոչնչացնի, որը մահուան խոկում է համարւում: Այսպիսիների համար է առաքեալն ասում. «Մի՛ երեւացէք իմաստուն ինքներդ ձեր աչքին» (Առակք, Գ.7):

Բարեկեցիկ չէ նաեւ որովայնամոլ մարդը, քանզի նման է ջրգողի, որ բնաւ գովելի չէ: Եթէ նմանը բարեկեցիկ լինէր, ուրեմն պէտք է բարեկեցիկ համարուէր նաեւ մտքում մեծամտացած մարդը, բայց այդպէս չէ եւ առաւել վատ է, քան ջրգողը: Իսկ հեզն ու խոնարհը ազատ են ամէն տեսակի ախտերից, քանի որ հեզն անոխակալ է, անցասում, մարդասէր, մտքով արթուն, աղաւնու նման անվնաս է: Իսկ հպարտը թշնամութիւն սերմանող է, հարուածող է, բարկացկոտ, անհամբեր ու գազանաբարոյ:

Եթէ այսպիսի յատկութիւններիցդ մեծամտանաս, ո՛վ մարդ, ուրեմն առիւծն ու վարազը քեզանից առաւել քաջարի են, իսկ դու նրանց համեմատ մի մժեղ ես ընդամէնը: Իսկ եթէ գեղեցիկ ես ու մեծամտանում ես, ապա իմացի՛ր, որ դա աղջիկների համար է պարծանք, բայց աւելի գեղեցիկ չես լինի, քան սիրամարգը, եւ նրա նման զարդարուն փետուրներ չես կարող ունենալ:

Ոսկով ու արծաթո՞վ ես մեծամտանում, բայց չէ՞ որ դրանք նաեւ աւազակների համար են պարծանքի առարկայ: Եթէ զարդերով՝ ապա դրանք ձիերի վրայ էլ են դրւում: Ուրեմն **բարեկեցիկը նա չէ, ում աշխարհն է գովում, այլ նա է, որ առաքինութեամբ է բարեկեցիկ**, քանզի նա է գովելի Աստծոյ եւ մարդկանց առջեւ, որ նպատակասլաց կերպով կարող է հասնել արքայութեան ժամադրավայր: Իսկ եթէ որկրամոլութիւնը համարես

բարեկեցութիւն, մեծապէս կսխալուես, քանզի նա, որ ուտելու եւ խմելու համար մտածում էր շտեմարանը մեծացնելու մասին, քանի դեռ այդ մտածումի մէջ էր ու չէր էլ սկսել կառուցել, լսեց, թէ այս գիշեր իսկ հոգին պէտք է վերցնեն:

Որկրամոլութեան պատճառով նախնիները դրախտից արտաքսուեցին: Որկրամոլութիւնը ջրհեղեղի պատճառ դարձաւ: Սուրբ Բարսեղն ասում է. «Ջուրը ոչնչացնում է հուրը, գինին՝ բանականութիւնը, ծովի ջուրը խորտակում է նաւերը, իսկ գինին՝ մարդուն»: Յարբեցողութիւնը մարդուն դարձնում է դիւահար, կամաւոր դեւ, որ առաւել վատն է դիւահարից, քանի որ նա ակամայ, իսկ սա՝ կամաւոր է լլկում:

Միս ուտելն ու գինի խմելը մարդուն դարձնում են ցանկասիրութեան շտեմարան: Իսկ որովայնը հաստացնելով կորցնում է նրբագոյն զգացումները: Գիրացած որովայնից նրբագոյն զգայութիւններ չեն կարող ծնուել: Անասունները յագենալով՝ այլեւս չեն ուզում խմել, մինչդեռ յարբեցողը եռակի շատ է ուզում խմել:

Արբեցութեան դէմ լաւագոյն դեղը յարբեցողներին խէթ նայելն է: Աթենէսը[6] ամէնամեծ բաժակն անուանում է «արծաթէ ջրհոր», իսկ Օգոստինոսը՝ «դժոխքի ջրհոր»: Ոսկեբերանն ասում է. «Շատակերութիւնը քունը փախցնում է աչքերից,

---

[6] Աթենէս – անտիկ յոյն դրամատուրգ, կատակերգութիւնների հեղինակ:

գլուխը թմրեցնում է, մարմինը ծանրացնում է, ոտքերն ու ձեռքերը, աչքերն ու առհասարակ ամբողջ մարմինը ապականում է, չորացնում ու անպտուղ է դարձնում մարդուն, արագ ծերացնում է, թմրեցնում է զգայութիւնները, մտքի սրութիւնը բթացնում է, մարմինը աղբի վնասակար շտեմարան է դարձնում, որից էլ առաջ են գալիս ամէն տեսակի հիւանդութիւններ»:

Ուրեմն ինչո՞ւ ես քեզ պարարտացնում, մի՞թե պարարտ կենդանու պէս պէտք է մորթենք քեզ եւ սեղանին մատուցե՞նք: Չափաւոր ուտողները վաստակի, աշխատանքի եւ կրթութեան մէջ պիտանի են լինում, քանզի առողջ են եւ զգաստ, իսկ խորտկասէրները վատառողջ են ու հիւանդոտ: **Մարդիկ տիկերը խնայում են, որպէսզի չափից շատ լցնելով չպայթեն, մինչդեռ իրենք իրենց չեն խնայում:**

Պահանջուածից աւելի սնունդը կերակուր չէ, այլ մարմնի ապականութիւն, քանզի կապում է ոտքերը, ծռում բերանը, ապականում աչքերն ու գլուխը: Լիացած ծառան չար է. երբ փոքր-ինչ աւելին է տրւում, արհամարում է իր տիրոջը, ինչպէս Ագարը՝ Սառային:

Եթէ հիւանդացել ես այս ախտով, ապա այն բուժող դեղը ծոմն ու աղօթքն են: Մտածի՛ր այն մասին, որ պարարտացած մարմինդ որդերին կերակուր է լինելու, աղքատների եւ ժուժկալ կեանքով ապրողների մարմիններից աւելի գար-

շահոտ է լինելու: Մտածի՛ր նաեւ աւելորդ ծախսից ազատուելու մասին, որից զերծ են չափաւոր մարդիկ: Սոկրատէսը հրապարակում վաճառուող ապրանքները տեսնելով ասաց՝ «Լա՛ւ է, որ զերծ եմ սրանցից, քանզի դրանց կարիքը չունեմ»: Մտածիր եւ սակաւապետութեան օգուտի մասին, օրինակ՝ Սոկրատէսն այնպիսի զգաստութեամբ կենցաղավարեց, որ Աթէնքում համընդհանուր ժանտամահի ժամանակ միայն ինքը չհիւանդացաւ, քանզի սակաւապետ էր: Ու նաեւ ասում էր՝ «Քչակերը հացի կարօտ չի զգում եւ մերձ է Աստծուն»:

Իսկ եթէ կամենում ես հնար գտնել այս գազանից ազատուելու համար, մտքումդ ունեցիր Քրիստոսի չարչարանքները, քացախն ու լեղին, մտածիր վերը յիշուած վնասակար բաների մասին: Մտածիր նաեւ յաւիտենական ընթրիքի մասին՝ նրանից յագենալու ախորժակ պահելով:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԲԱՐԻՔ ԳՈՐԾԵԼԸ ՉՊԷՏՔ Է ՅԱՋՈՐԴ ՕՐՈՒԱՆ ԹՈՂՆԵԼ

Աստծուց մեզ տրուած ամէն ժամը պարգեւ է բարիք գործելու համար: Դրա համար է Աստուած ցերեկը լոյս պարգեւել, որ հնարաւորութիւն ունենանք բարի գործեր կատարել, իսկ գիշերը՝ խաւար, որպէսզի մեր չար գործերը խափանի, եւ գոնէ ակամայից անկարող լինենք չար մեղքեր գործել: Գիշերը նաեւ յարմար է խոկումների, սերտողութեան, անցեալը յիշելու եւ աղօթելու համար. մեր Փրկիչը մատնութեան գիշերը առանձնակի աղօթք արեց:

Այսպիսով՝ ցանկացած պահ յարմար է բարի գործերի համար: Եթէ տուեալ պահն անցնի, յարմար ժամանակը թռչունի նման ձեռքիցդ կթռչի, եւ իզուր տեղը նրա հետեւից շուարած կնայես ճիշտ նրա նման, ով անտեղի հողմեր է պտտեցնում, ասես նայում է թռչունի հետեւից:

Հնագոյն դարերում ժամանակը պատկերում էին կոյսի տեսքով, որն ունէր թեւաւոր ոտքեր, գլխի առջեւի մասում՝ վարսեր, իսկ միւս մասերը ողորկ էին: Նա խոյի վրայ նստած ընթանում ու բախում էր մարդկանց դռները եւ ասում. «Ես ձեր բախտն եմ, թեւաւոր ոտքերս ինձ դադար չեն տալիս. եթէ մէկը շտապ բացի դուռը եւ բռնի իմ ճակատի վարսերը՝ բախտն իր ձեռքում է: Եթէ

յապաղի՝ կանցնեմ-կգնամ: Իսկ թէ փորձի յետեւիցս ընկնել՝ չի կարող հասնել ու բռնել, քանզի որեւէ մէկը չի կարող ինձ հասնել»:

Առասպելական այս օրինակից ի՞նչ հետեւութիւն կարող ենք անել. քանի դեռ ժամանակը բարեյաջող է եւ քանի դեռ այն մեր ձեռքում է, չպէտք է դանդաղել, եւ պէտք է բարիք գործել, իսկ եթէ պահը բաց թողնենք՝ թռչունին բաց թողած կլինենք եւ ձեռնունայն նրա հետեւից կնայենք: Յարմար պահը մեր յապաղմանը չի սպասում, այլ թռչում-անէանում է: Իսկ երբ անցնի, այլեւս նրա հետեւից գնալն իզուր է՝ հողմ պտտեցնելու եւ թռչնին բաց թողնելու նման:

Ալեքսանդր Մեծին մի անգամ հարցրին, թէ ինչպէ՞ս կարողացաւ կարճ ժամանակում աշխարհին տիրել, պատասխանեց. «Երբեւէ չյապաղելով»: Եւ ահա **դու երկինք գնալու ակնկալիք ունես, բայց փրկութեանդ գործը մի օրից միւսն ես յետաձգում եւ շարունակ յապաղում:** Չեմ հասկանում, թէ ի՞նչ ցնորամտութիւն է դա:

Հաննիբալ Աֆրիկացին[7] երբ որ կարող էր Հռոմը գրաւել՝ յապաղեց, իսկ երբ կամեցաւ դա անել՝ այլեւս չկարողացաւ: Այդպէս եւ դու գիտցիր, ո՛վ դանդաղկոտ, քո փրկութեան ժամանակը չվատնես, քանի դեռ կարող ես, իսկ երբ կամենաս դա անել, այլեւս ուշ կլինի:

---

[7] Հաննիբալը (Ք. ա. 247-183 թթ.) եղել է այժմեան Թունիսի տարածքում գտնուող Կարթագենի զօրքերի հրամանատարը:

Խոստովանահայրը գնում է հիւանդ մէկի մօտ եւ յորդորում խոստովանել, սակայն սա պահը փախցնելով ասում է՝ «Թող նախ վիճակս լաւանայ, յետոյ կխոստովանեմ...»: Այս նոյն մարդուն եթէ մի համեղ կերակուր հրամցնէին, չէր ասի, թէ դեռ ուտելու ժամանակը չէ, այլ անմիջապէս ախորժակով կճաշակէր: Ուտել կարող է առանց յապաղելու, իսկ խոստովանել՝ ոչ: Կարողութիւն ունի հոգին կորստեան մատնելու, իսկ գտնելու համար՝ չունի:

Ծանօթ չէ՞ք Յակոբ նահապետի պատմութեանը: Նա սիրուած էր իր մօր՝ Ռեբեկայի կողմից, ինչպէս որ նրա եղբայր Եսաւը հօր՝ Իսահակից: Ռեբեկան լսեց, թէ ծերունի Իսահակը պատուիրել է Եսաւին՝ գնալ որս անել եւ իր համար խորտիկ պատրաստել, որպէսզի ժառանգի իր օրհնութիւնը: Այդժամ մայրը կանչեց իր սիրելի ու նախընտրելի Յակոբ որդուն եւ ասաց, որ շտապ գնայ եւ մի գիրուկ ոչ բերի, խորտիկ պատրաստի ու մատուցի հօրը, որպէսզի ի՛նքը ստանայ նրա օրհնութիւնը, որն Իսահակը խոստացել էր Եսաւին: Ո՛չ Ռեբեկան ձգձգեց, ո՛չ Յակոբը յապաղեց, այլ գնաց, ուլը բերեց, մայրը արագ կերակուրը պարտաստեց, կերաւ Իսահակ հայրը եւ օրհնեց Յակոբին: Ծանր-ծանր յետ եկաւ Եսաւը, միայն թէ՝ արդէն ընդունայն. նա կորցրեց պահը եւ նաեւ օրհնութիւնը, թոչունին վանդակից արդէն բաց էր թողել: Յակոբը բռնեց թեւաւոր կոյսի «գիսա-

ւոր ճակատից», իսկ Եսաւը միայն նրա ողորկ մասին հպուեց:

Բոլոր դանդաղկոտներին անտեղի ափսոսանք ու Եսաւի նման դառը լաց է սպասում, իսկ արագաշարժներին՝ Յակոբի նման հայրական օրհնութիւն: Իր գործերի մէջ զգուշաւոր եւ ուշացող մարդուն պէտք է կանգնեցնել թագաւորների դատի առաջ (Առակաց, ԻԲ. 29):

Զաքէոսը ժանտաթզէնու վրայ էր, երբ կանչուեց Քրիստոսի կողմից. արագ իջաւ, Քրիստոսին ուրախութեամբ ընդունեց իր տանը, փրկուեց թէ՛ ինքը, թէ՛ իր տունը: Եթէ նա մի փոքր յապաղէր, Քրիստոս կանցնէր (այսինքն՝ բախտի գիսաւոր ճակատը բաց կթողնուէր), եւ ինքը կմնար շուարած ու ձեռնունայն:

Ում համար հենց այս ժամանակն է բարեյաջող, թող չսպասի՛ ուրիշ ժամանակի: Մեղաւոր կինը բոլորի ներկայութեամբ արտասուքով լուաց Քրիստոսի ոտքերը, իւղով օծեց, սրբեց իր վարսերով. նա արդարացաւ [Տիրոջ խօսքի համաձայն]՝ «Թողնուած են սրա մեղքերը» (Ղուկ. Է. 37-47): Քրիստո՛ն էր տան մէջ բազմածը, նրա խրախճանակիցները մաքսաւորներն ու մեղաւորներն էին, ոչ մէկը Նրան չէր տալիս այնպիսի անուշ ըմպելիք, ինչպէս Մագդաղինացու անուշ արտասուքն էր, ոչ ոք չհամբուրեց Նրա ձեռքն ու ոտքերը այնպիսի ջերմեռանդութեամբ, ոչ ոք չսրբեց ոտքերն այնպիսի նրբին կտորով, ինչպիսին Մագդաղի-

նացու ոսկեհեր վարսերն էին: Վերջինս դա անելու համար չսպասեց մէկ այլ ժամանակի եւ տեղի՝ իմանալով, որ յաւիտենական եւ իր աստուածութեամբ ամենագոյ Տէրը միշտ չէ, որ այստեղ կլինի: Ուստի յոյսով ու սիրով դիմեց եւ թողութեան արժանացաւ:

Մեղաւոր մարդն ի՛նքը պէտք է շարունակ բախի Քրիստոսի ողորմութեան դուռը, որի համար մայրագութ Յիսուս Քրիստոս եթէ ոչ բարեկամութեան, ապա գոնէ թախանձանքների դիմաց նրան երեք նկանակ կտայ՝ զղջման, խոստովանութեան եւ յագենալու նկանակները:

Եթէ կարող ես բարեկամի խնդրածն իսկոյն կատարել, ապա տմարդութիւն է վաղուան յետաձգել: Չասես քո բարեկամին՝ «Գնա՛, վաղը կգաս ու կտամ քեզ», եթէ հնարաւոր է անմիջապէս տալ, քանզի չգիտես, թէ վաղն ինչ կբերի:

«Կանեմ, կտամ, կգամ»,- նման ապառնի բայերը ճշմարիտ բարեկամութեան նշան չեն, այլ ձայնն են անտարբերութեան: Այդպէս ասող մարդիկ նման են ոզնու, որ իրենից որեւէ բան խնդրողին կարծես փուշն է ցոյց տալիս:

Այս ներկայ օրը շատերը տալիս են սատանային, իսկ Աստծուն խոստանում են վաղուայ օրը: Գալիս է վաղը, ապառնին դառնում է ներկայ, բայց էլի ներկան նուիրում են աշխարհին ու մարմնին, իսկ վաղը խոստանում են Աստծուն: Տզրուկը ջրի մէջ գաղտնի սպասում է ջուր խմող ձիուն, որ

աննկատ մտնի բերանը եւ կպչի մաշկին: Կամ՝ օձը խոտերի մէջ ծպտուած սպասում է, որ խայթի արածող ոչխարին: Այդպէս էլ դու ես, «թո՛ղ մնայ վաղը» ասող դեւին լսելով՝ ամուր բռնւում ես նրանից, որը քո արիւնն է ծծում տզրուկի պէս եւ խայթում օձի նման:

Քո թշնամի սատանային մի՛ հաւատա երբէք: Քո բոլոր օրերը նուիրիր Աստծուն, Որից ստացել ես ամբողջ ժամանակդ ու կեանքդ: **Ժամանակիդ մի պահն անգամ թող քո կողքով աննպատակ չանցնի**:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՁԱՆԱՁԱՆ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԽԱՓԱՆԵԼ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Առաքինութեան բազում պատկերներ կան, դրանցից որը կամենում ես՝ պատկերի՛ր քո մէջ:

Օրինակ՝ Եղիան աղքատութեամբ պայծառացաւ, իսկ Աբրահամը հարստութեամբ Աստծուն հաւատարիմ եղաւ, մէկը ամուսնութեամբ, ինչպէս Աբրահամը, մէկն էլ կուսութեամբ՝ ինչպէս Յեսու Նաւէն, Երեմիան, Յովհաննէս Մկրտիչն ու Յովհաննէս աւետարանիչը. մէկը՝ պահքով, ինչպէս Յովհաննէս Մկրտիչը, իսկ միւսն էլ կնոջ ու երեխաների մասին հոգալով, ինչպէս Յոբը:

Թագաւորական հոգսերը նոյնպէս չեն կարող կանխել առաքինութիւնը: Դաւթի ծնկները տկարացան պահքից, մարմինը գունատուեց իւղերից, նա քուրձ էր հագնում, սակայն հաստատուն էր առաքինութեան մէջ, եւ քուրձը շուք էր հաղորդում նրան: Թէոդոս Մեծը եւ Կոստանդիանոսը ծիրանիի տակից քուրձ էին հագնում, բայց նրանց տիեզերապետութիւնը ոչնչով չվնասուեց, այլ ընդարձակեցին իրենց տէրութիւնները եւ բարեպաշտութեամբ կառավարեցին ժողովրդին: Թէոդոս Մեծն իր թշնամի Եւգինէոսին նաեւ աղօթքով էր յաղթում:

Ամուսնութեամբ եւս մարդ կարող է վտանգուել, ինչպէս Սողոմոնն ու Սամսոնը, նմանապէս կարող է վտանգուել կուսութեամբ, ինչպէս յիմար կոյսերը: Հարստութեամբ՝ ինչպէս այն անողորմ մեծատունը, որը չխղճաց Ղազարոսին եւ կորստեան մատնուեց: Փարթամութեամբ առաքինացաւ Յովսէփ Արիմաթացին, իսկ Նաբաղ Կամելացին կորստեան մատնուեց: Եւ այդպէս՝ եթէ հարստութիւնը, կուսութիւնն ու ամուսնութիւնն ամէն ինչում լաւագոյնս գործադրուեն՝ ի բարին շահած կլինեն:

Անհմուտ մարդկանց ձեռքին լաւագոյն գործիքներն անգամ կարող են խամրել: Մինչդեռ **ո՛չ աղքատութիւնը, ո՛չ գերութիւնը եւ ո՛չ մի ուրիշ պատահար չեն կարող կանխել առաքինի մարդուն իր ընթացքից**: Յովսէփը եղաւ ծառայ եւ զրպարտուեց, բայց առաքինութիւնն անխախտ պահեց: Երեք մանուկները եւ Դանիէլը գերի ընկան, բայց ինչպէս հրով փորձուած ոսկի՝ անարատ գտնուեցին: Յոբը, Ղազարոսը եւ Տիմոթէոսը ցաւից տանջւում էին, բայց ցաւերը չկարողացան մարտի ասպարէզից դուրս թողնել նրանց: Դիոգենէս փիլիսոփային ասացին՝ ծե՛ր ես, կա՛նգ առ, իսկ նա պատասխանեց. «Մրցասպարէզով ընթանալիս մի՞թէ կանգ են առնում, մինչեւ վե՛րջ պէտք է ընթանամ»:

Փորձութիւնները նոյնպէս չեն կարող խանգարել, որպէսզի մարդ առաքինի մնայ: Հակառակը՝ նման վիճակում առաքինիները կարող են վերա-

հաստատել իրենց ճշմարտութիւնը: Կուրացա՞ւ աչքը, ուրեմն կասի՝ փակուեց պատուհանը ամէն չարիքի:

Թալանուե՞ց ունեցուածքը, ուրեմն դրա հետ հոգսերը քչացան:

Խորթացա՞ն բարեկամները, նրանց փոխարէն պէտք է ուրիշներին գտնել:

Վնասուեց ո՞տքը, ուրեմն խափանուեց չար ընթացքը:

Այսպիսի այլ պատուհասներ նոյնպէս առաքինի մարդիկ կարող են լաւի վերածել: Յափշտակուեցին Յոբի ունեցուածքն ու որդիները, ի՞նչ ասաց. «Տէրը տուեց եւ Տէրը վերցրեց»: Աստուած տուել էր, իսկ սատանան՝ խլել, բայց Յոբն ամէն ինչ Աստծուց տրուած բարիք էր համարում, իսկ դրա վերացումը՝ Աստծոյ նշանով սատանայի ձեռքի գործը:

Հիւանդ բժիշկն ունակ է ուրիշներին բժշկել, որովհետեւ հիւանդութիւնը չի վերացնում բժշկելու նրա կարողութիւնը: Արհեստաւորը գործիքները կորցնելով՝ իր հմտութիւնը չի կորցնում: Նմանապէս առաքինի մարդը, որ Աստծոյ առաջ պարզամիտ է, թէ՛ յաջողութեան, թէ՛ ձախորդութեան ժամանակ, թէ՛ մեծարուելիս եւ թէ՛ անարգուելիս նոյնն է մնում: Ինչպէս որ ձեռքերը բաց լինեն թէ փակ՝ նոյն չափն ունեն: Պլատոնն ասում է. բարերջանիկ մարդը, որն ապրում է առաքինի

կեանքով, չի տրտմի վրայ հասած արտաքին եւ մարմնական փորձութիւններից:

Մի մարդ հարցրեց Պլատոնին, թէ՝ մէկը ընկաւ պրիամոսական փորձութեան մէջ[8], մահացաւ եւ անթաղ մնաց. երջանի՞կ էր նա, թէ՞ ոչ: Պլատոնը պատասխանեց. «Հեռո՛ւ վանիր քեզանից կարճամտութիւնը, որովհետեւ ոչինչ չի կարող վերացնել հոգեւոր առաքինութիւնը»: Ասուածը պէտք է այսպէս հասկանալ. առաքինի մարդը եթէ զրկւում է ունեցուածքից, փառքից ու մեծութիւնից, միեւնոյն մարդն է մնում, ինչպիսին որ կար: Այդպիսի օրինակ է սուրբ Եւտիքէս զօրավարը, որը ո՛չ փորձութիւնից յուսահատուեց եւ ո՛չ էլ յաջողութիւնից փքուեց, այլ ծովափնեայ հաստատուն վէմի նման անշարժ մնաց ալիքների բախումներից: Կամ՝ ինչպէս նաւաստիները տագնապում են նաւի վրայ, իսկ նաւավարը անվախ ու ձիգ կանգնած ժպտում է նրանց վախերի վրայ: Այդպէս է զգաստ հոգին. երբ ամենքը խուճապի են մատնւում անսպասելի փոփոխութիւններից, նա նաւապետի նման նաւախելի ղեկի մօտ առաքինութեամբ կանգնած ժպտում է ուրիշների անտեղի խռովութեան համար:

Մի՞թէ ինչ-որ մահ կարող է խռովեցնել Աստծոյ երկիւղն ունեցողի հոգին, չէ՞ որ դա ազնուական կեանքի սկիզբ է:

---

[8] Պրիամոսական փորձութիւն - նիւթական կարողութիւնից զրկուելը:

Եթէ զգօն մարդուն վրայ է հասնում աղքատութիւնը, այն առաքինանալու հնարաւորութիւն է դիտում իր համար:

Եթէ անարգանք է վրայ հասնում, ապա կամաւո՛ր է ինքն իրեն արհամարհանքի արժանացնում, ինչպէս ծերունի Սիմոնը եւ ուրիշներ:

Եթէ ցաւեր՝ ապա անտեսում է, իսկ եթէ նեղութիւն է պատահում, հանգիստ է համարում եւ նոյնիսկ՝ իւրովի ինքն իրեն փորձելու առիթ:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵԹԷ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԻՑ ՈՐԵՒԷ ԲԱՆ ՊԱԿԱՍ ԼԻՆԻ, ՏԷՐԸ ՄԱՐԴՈՒՆ ԴՈՒՐՍ ԿԹՈՂՆԻ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԻՑ

Սադայէլի հպարտութիւնը, Ադամի եւ Եւայի անհնազանդութիւնը, Կայէնի նախանձը դրախտից կամ երկնքից արտաքսուելու պատճառ դարձան: Այդպէս էլ եթէ որեւէ մարդ շատ առաքինի գործեր անի, բայց կամովին, գիտակցաբար կամ թէ կարողութեամբ դրանցից մէկն անտեսած լինի՝ այդ մէկի պատճառով նրա համար կփակուի արքայութեան ճանապարհը: Ինչպէս օրինակ՝ երիտասարդ մեծահարուստը, որ պարծենում էր, թէ պահել է բոլոր օրէնքներն ու պատուիրանները, բայց երբ Քրիստոսից լսեց՝ «Եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա՛, վաճառի՛ր քո ունեցուածքը եւ տու՛ր աղքատներին եւ ա՛ռ քո խաչը եւ արի՛ իմ հետեւից» (Մատթ. ԺԹ.20-22)[9], այդժամ երիտասարդը տրտմեց ու հեռացաւ:

Մեծապէս դատապարտելի է, երբ մեղաւորն արհամարհում է դեղամիջոցը, երբ հիւանդն իրեն տրուած հաբից դէմքը ծամածռում է եւ այն անպէտք համարում, քանի որ հոգեւոր դեղն առանց

[9] «Ա՛ռ քո խաչը» արտայայտութիւնը, որը մէջբերում է Յակոբ Նալեանը, Ս. Գրքի հայերէն բնագրում բացակայում է (ծան. Խմբ.):

սիրոյ եւ ախորժանքի հաճելի չի լինի ընդունողի համար: «Ուսուցանէք,- ասաց Տէրը,- այն ամէնը, ինչ պատուիրեցի ձեզ, ոչ թէ ոմանց, այլ ամենքին»: Ի՞նչ շահ է, երբ մի տուն ամէն ինչ ունենայ, բայց ներս մտնելու դուռ չունենայ: Եթէ անտեսուի Քրիստոսի պատուիրանների մի չնչին մասն իսկ, այսինքն՝ եթէ մէկը աւետարանական մի պատուիրան անտեսի իբրեւ «անպիտան»՝ նուաստ ու դժոխային պէտք է կոչուի: Այդպիսի մարդը դատապարտելի է, մանաւանդ երբ զանց է առնում գիտակցաբար, կամքով ու կարողութեամբ:

Եթէ մէկը խոնարհ է, սակայն՝ ագահ, չի գողանում, սակայն չի էլ բաշխում կարօտեալներին, ապա արժէք չունի նրա խոնարհութիւնը:

Դատաստանի ժամանակ շատ ունեցածով պարծեցողները լսելու են, որ դրա մի չնչին մասն անգամ իրենք չեն ստեղծել: Իմ հանդէպ առաքինի եղաք,- կասի Տէրը,- բայց ընկերների ու աղքատների հանդէպ տմարդի եղաք, ուրեմն ձեր գործերը ոչ թէ ինձ համար էք արել, այլ ձեր պարծանքի: Եւ ուրեմն նրանց վարձը ձեզանից թող վերցուի, իսկ ձեզ Կայէնի պէս կընդունեն:

Միայն բամբասանքի պատճառով որեւէ մէկը կարող է դժոխք գնալ եւ արտաքսուել արքայութիւնից, ինչպէս Ահարոնի քոյր Մարիամը՝ բանակատեղիից (Թիւք, ԺԳ.14-15): Ոչ ոք թող չասի՝ մի՞թէ Աստուած անողորմ է, որ մի փոքր յանցանքի համար մարդուն յաւիտենական պատժի է ար-

ժանացնում յանցապարտի նման: Իսկ ես կասեմ՝ թէկուզ դա դատապարտելի գործ չէ, սակայն արժանի է արդարադատութեան: Մի իշխան, որ թագաւորին ամենայն ծառայութիւն է մատուցում, մի զանցառութեան համար չի՞ պատժուի,- իհա՛րկէ:

Մինչեւ ե՞րբ պէտք է անմտութիւններ դուրս տանք,- ասում է Ոսկեբերանը: **Աստծոյ բարերարութեանն ապաւինելով կարծում էք կարելի է անխտիր ամէն բան գործե՞լ:** Չէ՞ որ նրա բարերարութիւնը կարող է ապականիչ դառնալ մեր փրկութեան համար: Իսկ եթէ մեղք էլ գործած լինենք, չպէտք է յուսակոտոր լինենք, այլ՝ ապաշխարութեամբ հասնենք մեր փրկութեանը:

Մարդասէր է Տէր Աստուած, նաեւ՝ արդար դատաւոր: Ներում է մեր մեղքերը, քանզի արդար է: Եթէ պէտք է թշնամուն սիրել, ապա բարեկամին վնասողը հեթանոսներից էլ վատթար է, նմանները անիրաւ մամոնայի բաժին կդառնան, կկորցնեն արքայութեան բանալին, եւ անօգուտ կլինի նրանց դուռը բախելը: Իսկ եթէ մէկը բոլոր պատուիրանները պահի եւ միւս կողմից էլ գթասիրտ լինի, արդարեւ բոլոր շնորհներին արժանի կլինի:

ԴԺՈԽՔՈՒՄ ՍՊԱՍՈՒՈՂ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպէս որ արքայութեան փառքն է անծանօթ աչքերի ու լսելիքի համար եւ մարդու սրտի լարերին չի դիպչել, նմանապէս եւ դժոխքի տանջանքներն են անտես աչքերի, անլուր լսելիքի եւ անծանօթ՝ մտքի համար: Լսել ենք, իհարկէ, որ այնտեղ՝ դժոխքում հուր է եւ խաւար, կապանք ու անսպառ որդեր, բայց չպէտք է կարծել, թէ դրանցից բացի այլ բան չկայ դժոխքում: Ինչպէս որ միայն ծովն ափից տեսնողը կարող է ասել, որ ամբողջ ծովն է տեսել, թէեւ ամբողջը չի տեսել, նոյն ձեւով էլ երբ արքայութեան փառքն ու դժոխքի տանջանքներն են ներկայացւում՝ միայն դրանք բաւարար են կռահելու համար եւ ամբողջի կարիքը չկայ:

Եթէ հուր է, ինչպէ՞ս կարող է միաժամանակ խաւար լինել, քանզի Տիրոջ ձայնը զատում է բոցը հուրից: Կամ՝ մի՞թէ մարմնի ջերմութիւնը լուսաւոր է եւ միեւնոյն ժամանակ այրում է: Այս հուրը լուսաւոր է, իսկ այն հուրը՝ խաւա՞ր. եթէ հուր է՝ երբեմն կարող է մարել, մինչդեռ դժոխքինը հանապազ այրում է ու չի սպառւում: **Մեղքն էլ դժոխքի հուրը բորբոքող նիւթն է**: Անհուն եւ անսահման է այն, քանզի հակառակուելով անհուն բարուն՝ դժոխքի հուրը անհատնում վառելիք է ստանում

եւ երբէք չի հանգչում: Անտառի փայտի նման բորբոքւում է հուրը. մեղքերի անտառն անհուն է, դրա համար էլ այրող հուրը անդադար վառւում է ամէն ժամ՝ որքան որ չարիք կայ մշտապէս այրելու, միշտ խաւարի մէջ մնալու եւ անդադար հեծեծելու համար:

Հնում պարսիկները մահապարտներին կենդանի կապում էին հոտած մեռելին եւ պտտեցնում մինչեւ մեռնելը: Իմացի՛ր, ո՛վ մեղաւոր, որ կապուելու ես հոտած եւ գարշելի դեւերի հետ եւ երանի՛ թէ շուտ ազատուէիր նրանց ընկերակցութիւնից: «Գնացէք ինձանից,- ասում է,- յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի եւ իր հրեշտակների համար» (Մատթ. ԻԵ.41): Այն ժամանակ հարուստի նման տեսնելու ես աղքատներին Աբրահամի գրկում (Ղուկ. ԺԶ.19-31), քո ատելիին՝ արքայութեան մէջ, պատկերացրու՝ որքա՛ն ցաւ է լինելու քեզ համար:

Ոսկեբերանն իր ԻԴ ճառում ասում է. «Երբ ազնուականներից մէկն այստեղ բանտ ընկնի, մահապարտների հետ կապուի ու վատ հոտ առնի, իմացի՛ր, որ բոլոր մահերի համեմատ առաւել վատթար կհամարի իր համար»: Ուրեմն պատկերացրու, թէ ինչպիսի՛ չարիք է սպասւում, երբ մահապարտների հետ այրուենք. ոչ ոքի չենք տեսնի, մեզ էլ ոչ ոք չի տեսնի, եւ միայն կզգանք խաւարն ու մութը, որ խանգարում են մեզ ուրիշներին տեսնել:

Եթէ խաւարը մեր հոգիներն է նեղում, ի՞նչ պէտք է անենք, երբ նաեւ ցաւերն ու անշէջ հրի մորմոքն էլ վրայ հասնեն: Այն ժամանակ ո՛չ հայրն օգնել կկարողանայ, ո՛չ բարեկամը, ո՛չ հրեշտակները կբարեխօսեն եւ ո՛չ էլ դատաւորը բարեգթութեամբ կշարժուի: Թերեւս աղքատնե՞րը գթան, բայց Ղազարոսն էլ հարուստին մի կաթիլ ջուր չտուեց: Ոչ էլ գթասիրտ կանայք կկարողանան օգնել, ճիշտ իմաստուն կոյսերի նման, որ իւղով չօգնեցին յիմարներին (Մատթ. Ի Ե. 1-13):

Շտապենք ուրեմն խոստովանութեամբ Դաւթի նման մեղմացնել վրայ հասած ցաւերը: Այստեղ ինչ որ անում ենք՝ զօրութիւն ունի, մինչդեռ այնտեղ՝ ոչ, ո՛չ լացն ունկնդրող կլինի եւ ո՛չ էլ որդերից ազատող: Եթէ մէկը մեզ բաղնիքի եռացող հնոցի մէջ գցի, արդեօք ամէն ինչ չե՞նք տայ այնտեղից ազատուելու համար: Անվախճան ցաւերը դարմանելու ի՞նչ դեղ կարող ենք գտնել,- **միայն այստեղի հառաչանքները, արտասուքի կաթիլները, սրտի բեկմամբ զղջումն ու բարի գործերը կարող են նժարին դրուել՝ տանջանքներից ազատուելու համար**: «Երանի՛,- ասում է,- սգաւորներին, որովհետեւ նրանք պիտի մխիթարուեն եւ երանի՛ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմութիւն պիտի գտնեն» (Մատթ. Ե. 4, 7): Երբ մէկին դէպի կախաղան են տանում, ինչքա՜ն աղերսալից է նայում այս ու այն կողմ՝ յուսալով, որ մէկը կգայ ու կազատի իրեն, ինչպիսի՛ դող է պատում նրան,

խռովւում ու մթագնում է մտքով: Ոսկեբերանն ասում է. «Տեսայ մահապարտների, որոնք պատժից ազատուել էին թագաւորի մարդասիրութեան շնորհիւ, նրանք խոստովանում էին՝ չէին ցանկանայ, որ մէկ ուրիշն էլ իրենց մտքի տանջանքն ապրեր»:

Եթէ մարմնաւոր մահը, լինելով ժամանակաւոր, այսպէս զարհուրեցնում է, ապա ինչե՞ր կարող է անել յաւիտենականը: Եթէ մէկին բնակեցնէին արքունական պալատում, հանգիստ տային փետուրով փափկացրած անկողիններում, բազմեցնէին խնջոյքի սեղաններին, սպասաւորները ծառայէին նրան, ապա նման կեանքի մէջ ասէին՝ այլեւս դուրս չես գալու այստեղից, արդեօ՞ք այդ ամէնը տանջանք չէր դառնայ նրա համար: Իսկ եթէ ասե՞ն, որ քո տակ անկողնու փոխարէն կրակ կփռեն եւ քեզ վրայ վերմակի փոխարէն որդ կգցեն, եւ դա յաւիտեանս կտեւի՞. վա՛յ ինձ ու քեզ, պարզապէս կխելագարուենք:

Ոսկեբերանը ԾԴ ճառի մէջ աշխարհասէր կիսասադուկեցիների բերանով ասում է. «Սպառնալիքներն ու ահը նրա համար են, որպէսզի պարկեշտ դառնանք»: Եւ արդեօք կլինի՞ պարկեշտութիւնը, եթէ տանջանքն ու արքայութիւնը չլինեն, մի՞թէ Աստուած նախանձու՞մ է մեր վայելքներին, քա՛ւ լիցի: Ինչո՞ւ անբաններին բնական կարիքների մէջ թողնելով՝ Աստուած վրէժխնդիր չի լինում ցանկութեան ու ցասման հա-

մար: Բայց եւ նրանք էլ երբեմն պատժւում են մեզ խրատ լինելու համար, որովհետեւ Աստուած կարծես մեր ապստամբութեան զէնքն առնում է մեր ձեռքից եւ պատժում է անմեղներին, որոնք մեղաւորների միջոցով Աստծոյ դէմ պատերազմի գործիքների են վերածւում:

Ուրեմն Աստծոյ վրէժխնդրութեան շնորհիւ քեզ կճանաչես որպէս մտաւոր ու բանական արարած, կհոգաս պարկեշտութեան դպրատուն մտնելու եւ սանձարձակ անբաններից տարբերուելու մասին: Եւ եթէ կարծում ես այս ամէնը սպառնալիք են, ապա ի՞նչ կասես ջրհեղեղի, Յակոբի ու Յովսէփի ժամանակ եօթանմեայ սովի, ծծմբախառն հրի, Դաւթի ժամանակների եռօրեայ մահտարաժամի, Բաբելոնում հրեաների եօթանասնամեայ գերութեան մասին: Միթէ դրա՞նք էլ ընդամէնը սպառնալիք են եւ ոչ թէ գործերի իրական հետեւանքը: Իսկ ինչո՞ւ այդ ամէնը եղաւ,- մեղքերի՛ համար: Ահա այդպէս էլ ցանկութիւնն անցնում է, մինչդեռ դժոխքի հուրը չի հանգչում:

ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՊԱՏԵՀ ԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ՀԱՄԱՐ

Երբ եբրայեցիները ոսկէ հորթը ձուլեցին, սկսեցին պաշտել այն, նստեցին ուտելու եւ խմելու, խնջոյքի եւ երգ ու խաղի: Կռապաշտութիւնից այդպէս գուսանական արուեստը ծնուեց: Երբեմն կռապաշտութիւնն ինքն է գուսանական խեղկատակութիւնից սերում, քանզի եթէ Սողոմոնը գուսաններ չպատրաստէր տղամարդկանցից ու կանանցից, կռապաշտութեան մէջ չէր ընկնի. «Ինձ համար գուսաններ ու երգիչներ ու երգչուհիներ ունեցայ»,- ասում է նա (Ժող. Բ.8):

Դրանից ծնւում են դատարկաբանութիւնն ու պարսաւելի գործերը, անպատեհ ծաղրածուները, ամօթխածութեան խորտակումը, չարաբարոյ կրթութիւնը:

Յովհաննէս Մկրտչի գլխի համար որոգայթ լարուեց Հերովդիայի կաքաւելով, եւ գլխատուեց նա: Եւդոքսիա[10] թագուհին Յովհան Ոսկեբերանի քարոզութիւնը խափանելու համար հրամայեց Սուրբ Սոֆիայի տաճարի գաւթում լարախաղացներ ու միմոսներ բերել: Իսկ Ոսկեբերանն ասաց. «Դարձեալ Հերովդիան է կաքաւում, դարձեալ նա է պահանջում Յովհաննէս Մկրտչի գլուխը սկու-

[10] Էլիա Եւդոքսիա - Բիւզանդիայի Արկադիոս կայսեր (383-408 թթ.) կինը, հռոմէական բանակի զօրավար Բաւտոնի դուստրը:

տեղի վրայ»: Ահա՛ քեզ անօրէն մի արհեստ, որ չի խնայում մարգարէների գլուխը եւ վարդապետներին աքսորի է մատնում:

Մեր Փրկիչը քանի դեռ չհեռացրեց փողահարներին եւ լալկաններին, չկենդանացրեց Տալիթային՝ կարծես արտաքսելով նրա մահուան պատճառը: Փիլիպպոսը վտարեց Ալեքսանդր Մեծի մօրը՝ Օլիմպիային եւ կնութեան առաւ ոմն Կլեոպատրայի, այդժամ մի խեղկատակ Փիլիպպոսին հաճոյանալու համար ծամածռութեամբ կատակաբանեց՝ «Ո՛վ թագաւոր, շնորհաւո՛ր թող լինի Կլեոպատրայի հետ ամուսնանալդ, նրանից հարազատ որդիներ կծնես քո նմանութեամբ»: Այս լսելով՝ Ալեքսանդրը հանեց սուրը եւ սպանեց խեղկատակին եւ ընդհատեց հարսանիքը:

Ոսկբերանն ասում է. «Սգալու ժամանակներ են, իսկ դու խեղկատակութեամբ ես ապրում»: Ո՞ր մարտիկն է, որ ախոյեանի դէմ պայքարելը կթողնի եւ կատակաբան խօսքեր կասի: Ահա որպէս ախոյեան սատանան է կանգնած անհանգիստ շարժումներ անում, գոչում, տակնուվրայ է լինում, հուր ու կայծակ է յարուցում քո փրկութեան դէմ, իսկ դու կատակում եւ անմիտ բանե՞ր ես ասում: Պատերազմական ժամանակներ են, իսկ դու ռամկական արուե՞ստն են բանեցնում, խաղում ես, ծաղր ես անում եւ խեղկատակութիւնը մեղք չես համարում:

Ծաղրաբան մարդիկ նման են այծերի կամ կապիկների, որոնց խաղացնելով զուարաճանում են: Այծը գարշահոտ կենդանի է, կապիկը զազրատեսք է ու անամօթ: Կատակաբանները նման են նաեւ գողերի, որոնք մեզանից մեր ամէնաթանկը՝ ժամանակն են գողանում: Մեռնում է հոգին մեղքերի մէջ, որի համար իրօք պէտք է լացել, իսկ դու հոգու կորստեան վրայ ծիծաղում ես եւ նոյնիսկ գուսաններով կամենում ես նրան դէպի դժոխք ուղղորդել:

Ինչպիսի՞ վարք ունէին սուրբերը. նրանք խոնարհ էին, հեզ, տրտում, տխրադէմ: Ուրեմն ով խեղկատակ է՝ սուրբ չէ՛, անգամ հեթանոս է, ծաղր ու ծանակ: **Խեղկատակութիւնը թուլացնում է ոգիները**, նոյնիսկ բառն ինքը խայտառակ իմաստ ունի՝ նշանակում է երեսն ու բերանը խեղել՝ ծռել, աչքերն այլայլել, հարբեցած ձեւանալ, հոմանի ու անբարոյ տեսք ընդունել:

Մագթաղենացին Քրիստոսի ոտքերի մօտ նստած Նրա կենաց խօսքն է լսում: Մարթան խոնարհաբար կերակուր է պատրաստում, Սամուէլի մայր Աննան վշտագնում է տապանակի հանդէպ: Իսկ դու անհամեստաբար ծիծաղում ես... Անպարկեշտաբար զարդարւում ես, կամենում ես անմեղ քրիստոնեաների վրայ Աստծոյ ցասո՞ւմը բերել: Եկեղեցում լուռ մնալ չգիտես, իսկ մարդաշատ տեղերում գորտի նման կոկռում ես: Վա՛յ քեզ՝ նման վարք ունեցողիդ, եւ վա՛յ ինձ՝ եթէ հայրական խրատիս դէմ աքացի ես տալու: Ես ասեմ, իսկ դուք՝ լսէք:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԷՏՔ ՉԷ ԱՅԼՈՑ ԱՆԿՄԱՆ ԿԱՄ ԱՆՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՈՒՐԱԽԱՆԱԼ

Երբ հրեշտակները Ղովտին եւ իւրայիններին Սոդոմից հանեցին, պատուիրեցին այլեւս յետ չնայել: Փիլոն իմաստասէրն ասում է, թէ այդ պատուէրը տրուեց, որպէսզի չուրախանան սոդոմացիների արժանահաս պատիժների վրայ: Քանզի չպէտք է ծիծաղել կամ ուրախանալ անյաջողութեան մատնուածների վրայ:

Անյիշաչար Յոբ երանելին ասում է. «Եթէ ուրախանամ գետին ընկնող իմ թշնամու վրայ կամ եթէ ասեմ՝ լաւ եղաւ, ապա ես նոյնպէս անէծքի կարժանանամ, ժողովրդի համար արհամարհուած եւ զզուելի կդառնամ» (Յոբ, ԼԱ. 29):

Այս մոլութիւնը յիրաւի սատանայական է, քանի որ սրտի չարութեամբ տխրում է մեր բարութեան համար, իսկ չարիքից ուրախանում է: Բայց անմեղ նախանձի դէպքում կարելի է ասել Միքիայի նման՝ «Մի՛ ոտնահարիր ինձ, ո՛վ իմ թշնամի, քանզի եթէ գլորուեմ, նորից ոտքի կկանգնեմ» (Միքիա, Է. 8):

Ով ուրախանում է այլոց անյաջողութեան վրայ եւ տխրում է յաջողութիւնից, նաեւ իրե՛ն է վնասում եւ մարտնչում է իր օգուտի դէմ: Քանզի

եթէ սրտակից ընկեր լինէր բարեբախտութեանը, հաւասարապէս կվայելէր դրա պտուղները:

Նման մարդիկ կարծես մելամաղձոտ խաւարասէր լինեն, որ ատում են լոյսը եւ չեն կամենում որեւէ մէկի հետ խօսել, որոնք եթէ առողջ լինէին՝ հակառակը կսիրէին, այսինքն՝ լոյսն ու բարեկամութիւնը: Պիտտակոս փիլիսոփան[11] ասում է. «Ձախորդ դիպուածը երբէք մէկի երեսով մի՛ տուր, որպէսզի ներքին բարկութիւնդ սիրող մարդու համբաւ ձեռք չբերես»: Այդ մարդիկ նման են այնպիսի թիթեռների, որ սիրում են խաւարը եւ ատում են ճրագի լոյսը, իսկ եթէ կամենան հանգցնել ճրագը՝ նրա բոցից կայրուեն: Նրանք կենդանիներից էլ վատթար են, խոզերն, օրինակ, ցաւակցում են սպանդանոց տարուող միւս խոզին, ճնճղուկները այլ ճնճղուկի ձագերին են սնուցում, բազէն կերակրում է արծուի ցած ընկած ձագին, գայլը սնուցում է սպանուած գայլի ձագերին:

Վերացրո՛ւ քո միջից նախանձը, եւ ինչ որ ունեմ՝ քոնը կլինի: Դաւիթը Սաւուղի յաջողութիւնից խնդութիւն էր ապրում, թէեւ թշնամի էր իրեն, իսկ նրա մահանալիս լաց էր լինում: Պօղոսը լալիս էր Քրիստոսի Խաչի թշնամիների համար եւ ուրախանում էր կորնթացիների ապաշխարութեան առիթով: Ոսկեբերանն ասում է. «Նախանձոտ մարդը խոզի նման թաւալւում է տիղմի մէջ,

---

[11] Պիտտակոս (Ք. ա. 651 - 569 թթ.) – իմաստասէր, հին Յունաստանի եօթ իմաստուններից մէկը:

դեւից առաւել չարութեամբ է խնդում ընկերոջ վնասի վրայ եւ այն ժամանակ է հանգստանում, երբ տեսնում է որեւէ մէկին վշտերի մէջ, իսկ ուրիշների թշուառանալիս փառաւորում է»: Դրա նման մարդը որեւէ այլ բան չի ցանկանում, քան միայն բարեկամի տրտմութիւնը: Այդպիսիներին շան նման պէտք է քարկոծել եւ դեւերի նման հալածել:

Անյիշաչար մաքսաւորն ու պոռնիկը մտան արքայութիւն, իսկ ովքեր այնտեղ էին՝ դպիրներն ու փարիսեցիները, նախանձի պատճառով դուրս քշուեցին: **Սէրը չար բան չի խորհում, չի ուրախանում անիրաւութեան վրայ, այլ ուրախանում է միայն ճշմարտութեան վրայ** (Ա Կորնթ. ԺԳ. 4-5):

ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԱՐՏԱՔՈՒՍՏ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՆ, ԻՍԿ ՆԵՐՔՈՒՍՏ՝ ՍԱՏԱՆԱՅ

Շատերը Քրիստոսով բերկրում ու հրճւում են միայն արտաքին ձեւերով, կեղծաւորաբար, մարգարտի գոյնով են շղարշում իրենց դէմքն ու հրեշտակային կերպարանք են ընդունում: Բայց եթէ մտնես նրանց խղճմտանքի տան ներսը, ապա այնտեղ կգտնես սոսկ տերեւաթափ թզենի, մարգարտին միայն գոյնով նմանող սովորական քար, որի մէջը, սակայն, փուչ է: Այնտեղ կգտնես արտաքուստ լուսազգեստ հրեշտակ, իսկ ներքին էութեամբ՝ սատանայ, որ լի է հպարտութեամբ, նախանձով, փառասիրութեամբ եւ այլ մեղքերով: Փտած մի փայտ է այդպիսի մարդը լուսատու գիշերուայ մէջ, հաւատքի արեւի դիմաց՝ մթին խաւար: Ծառը պտղից է ճանաչւում, իսկ վարդապետը՝ իր աշակերտներից,- ասում է Գրիգոր Աստուածաբանը: Արտաքին բարութիւնը որեւէ օգուտ չի տայ առանց ներքին բարութեան, քանզի այդպիսի մարդիկ միայն արտաքուստ են բարի: Գերեզմանների կոյտ են՝ լի մեռելոտի ոսկորներով, ճիշտ այնպէս, ինչպէս ասում է Սուրբ Հոգին. «Կենդանի անուն ունես, բայց մեռեալ ես» (Յայտն. Գ.1):

Այն գործը, որ սիրով չի առաջնորդւում, ըստ հաւատի մեռելածին է: Ի՞նչ է միայն արտաքին կերպարանքով քրիստոնեան,- մարմին առած դեւ, որ թէեւ աստուածապաշտութեան կերպարանք է առել, սակայն զուրկ է զօրութիւնից:

Չար քրիստոնեան աչքերը բաց է նստում խաւարի մէջ, իսկ անհաւատը նստում է լոյսի մէջ, բայց՝ կոյր աչքերով: **Գաղտնիքների խորքը տեսնող մարդը որեւէ մէկի շրթունքների գովասանքից չի խաբուի**, քանզի բերանով օրհնում են, իսկ սրտով՝ անիծում: Իսկ սուտ քրիստոնեան բերանով պատւում է, սակայն գործով՝ անիծում: «Ո՛ղջ եղիր», ասում է հրէից թագաւորին եւ թքում Քրիստոսի երեսին ու եղեգով ծեծում գլուխը: Ծաղկազարդի օրը «Օվսաննա» է երգում, իսկ Աւազ ուրբաթին հրեաների նման գոռում՝ «Խա՛չը հանիր դրան»: Դաւիթը մեղանչեց ցանկասիրութեամբ, շնութեամբ ու մարդասպանութեամբ, բայց «Մեղայ Տէր» ասելով լսեց Նաթանին, եւ Տէրը ներեց նրա մեղքերը: Սաւուղը մեղանչեց միայն անհնազանդութեամբ, բազմիցս մեղայ եկաւ, սակայն չարդարացուեց: Պետրոսը սիրով դաւանեց Աստծոյ Քրիստոս որդուն, բայց՝ պատժի երկիւղից դրդուած: Դաւիթը ճշմարիտ խոնարհութեամբ մեղայ եկաւ եւ ընդունեց թողութիւն, իսկ Սաւուղը մեղայ ասաց միայն թագաւորութիւնը կորցնելու երկիւղից դրդուած, ուստի չարդարացուեց: Սաւուղի զոհը մեռած էր, իսկ Դաւ-

թինը՝ կենդանի: Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ձեր մարմինը որպէս կենդանի պատարագ պատրաստէք, ասում է Պօղոս Առաքեալը (Հռոմ. ԺԲ. 1):

Շատերը երկար-բարակ խօսում են աղքատների մասին, սակայն հէնց միայն տեսքից ու խեղճութիւնից զզւում են: Աբրահամն աղքատներին իր գոգն էր ընդունում, մինչդեռ ներկայիս հարուստները անգամ իրենց տան շէմքին մօտ չեն թողնում: Մի՞թէ սա քրիստոնեային վայել գործ է:

Դիոգենէսը անուշ իւղերով էր օծում իր ոտքերը, իսկ երբ ոմանք մեղադրում են՝ ասում է. «Ո՛վ յիմարներ, չէ՞ որ հոտը ոտքերից կարող է վեր՝ դէպի քիմքը բարձրանալ, մինչդեռ գլխից վեր բարձրանալիս կարող է ցնդել»: Ոտքերը աղքատներն են, որոնց պէտք է օծել, քանի որ ողորմութեան իւղի անուշ բուրմունքից զուարթանում է միտքը, եւ պէտք չէ հարուստներին ու պաշտօնեաներին օծել, քանզի հոտը մարդկային գովասանքով կցնդի օդ: Սա նման է ծիածանի պատահական ի յայտ եկած ու ոչ իրական գոյներին. ծիածանը չի կարող երեք մանուկներին հրաւիրել Աստծուն օրհնելու, քանի որ իրական գոյ չէ, այլ՝ պատահական: Ահա մի յարմար օրինակ կեղծաւորների համար, որոնց օրհնութիւնը բնաւ հաճոյ չէ Աստծուն:

Կայէնը երկրի բնական պտղից զոհաբերեց, բայց սրտանց չարեց դա եւ հասուն պտուղը չմատուցեց Աստծուն, այսինքն՝ լաւագոյնը պահեց իր համար, իսկ պատահական աճածը, որի վրայ

ջանք չէր թափել, Աստծուն մատուցեց: Իսկ Աբելը նախ ինքն իրեն ու իր սիրտը, ապա եւ իր հոտերի անդրանիկ ծնունդը զոհաբերեց Աստծուն եւ արդարացաւ:

Ո՛վ քրիստոնեայ, անուանդ համապատասխան գործեր արա՛: Ալեքսանդր Մեծը երբ նոյն՝ Ալեքսանդր անունով մի զինուորի տեսաւ, որ խիստ ծոյլ ու երկչոտ էր, ասաց նրան. «Կա՛մ անունդ փոխիր, կա՛մ գործերդ»: **Աստծուն քո խոտելի գործերն ես բերում, բայց նրանից խնդրում ես թողութիւն եւ ազնիւ շնորհներ**:

Մէկը Լուսնթագի հետ պայման կապեց, որ ինչ ստանայ՝ կէսը կտայ նրան. ապա մատուցեց մի տոպրակ լիքը ընկոյզի կեղեւ: **Այն ընծան, որի մէջ խոնարհ սիրտ չի դրուած, ոչինչ է**:

Այդ ինչի՞ց է, որ շարունակ խոստովանում ես, աղօթում, ողորմութիւն ես տալիս, բայց նոյն այսահարն ու դիւոտածն ես մնում, ո՛վ քրիստոնեայ: Ինչու՞ սիրտդ որպէս խունկ չես ծխում Աստծոյ առաջ, այլ պահում ես քո ու աշխարհի համար: Հէնց այդ պատճառով է, որ այսահարութիւնից չես բժշկւում: Առիւծի մոնչիւնի ձայն ունես, բայց՝ նապաստակի երկչոտութիւն: Դիոգենէսը մի մարդու տեսաւ, որն առիւծի մորթի հագած հպարտ-հպարտ քայլում էր, ասաց նրան. «Դադարեցրո՛ւ առաքինութիւնը ծաղրի ենթարկել»: Այդպէս էլ դու, քրիստոնեայ՛ մարդ, դադարեցրու՛

Քրիստոսի անունն ամօթի մատնելուց, չար վարքովդ նրան հայհոյելուց:

Երբ քրիստոնեայից Քրիստոսի առաքինութեան անուշ հոտն ու բուրմունքը շուրջբոլորը չի տարածւում, հեթանոսները տեսնում են նման մարդու մոլութիւնն ու կարծում, թէ նրա պաշտամունքն էլ մոլութիւն է պարունակում: Մարդ իրեն հայհոյել տալով հայհոյում է իր պաշտած Յիսուս Քրիստոսին:

ՅՈՒՍԱԴՐՈՒԹԵԱՆ, ՕԳՆԵԼՈՒ ԵՒ ՓՈՐՁԱՆՔԻ ՄԷՋ ԸՆԿԱԾՆԵՐԻՆ ՄԽԻԹԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Փորձութիւններ կան, որ մեղքի արդիւնք են: Աստուած դուրս է դրանից, քանզի Նա չի փորձում մարդկանց՝ մեղքի մէջ գցելով: Այդ մասին է ասում Յակոբոս առաքեալը. «Ոչ ոք, երբ փորձութեան մէջ լինի, թող չասի՝ Աստծուց եմ փորձւում, քանի որ Աստուած չարից չի փորձւում եւ ինքն էլ չի փորձում ոչ ոքի, այլ ամէն մարդ փորձւում է իր ցանկութիւններից» (Հակ. Ա. 13-14):

Չի խորտակում Աստուած, քանզի վեր բարձրացնելով փառաւորում է:

Չի խոցում Աստուած, քանզի բժշկում է:

Չի գերում Աստուած, քանզի ազատում է:

Չի թողնում Աստուած, որ վայր ընկնի մարդ, քանզի վեր է բարձրացնում:

Սենեկան ասում է. «Ինձ շնորհ արա, երբ խոցուած լինեմ՝ բժշկի՛ր, եւ ոչ թէ խոցիր, որ յետոյ բժշկես»: Թէեւ Աստուած ոչ մէկին չի փորձում մեղքի մէջ գցելով, սակայն երբեմն մեծամտութիւնը կոտրելու համար թոյլ է տալիս ոմանց սայթաքել, որպէսզի տեսնելով իրենց տկարութիւնը՝ Աստծուն դիմեն եւ ուրիշ ընկածների էլ ողորմութիւն անեն: Այդպէս թոյլ տուեց թերահաւատ Պետրոսին ընկնել, եւ երբ նա հասկացաւ իր տկարու-

թիւնն ու ասաց՝ «Տէ՛ր, փրկիր ինձ», Աստուած նրան հանեց ընկած վիճակից: Աստուած չի գցում մարդուն մեղքի մէջ, այլ օգնում է հաստատուն մնալ եւ մխիթարում է թողութեան յոյսով, որ յուսահատութեան մէջ չմնանք:

Նոյնը պարտաւոր ենք մենք անել: Ոչ մէկին չպէտք է գայթակղեցնելով մեղքի մէջ գցենք, իսկ յուսահատուածներին պէտք է մխիթարենք եւ օգնենք աղօթքներով: Այդպէ՛ս Մովսէսը խոշտանգըւած իսրայէլացուն օգնեց ազատուելու եգիպտացու հալածանքից (Ելք, Բ. 11-14): Ուրեմն փորձանքի մէջ ընկածին օգնող Մովսէսը նման է քրիստոնեաներին եգիպտական դեւերից ազատողի, իսկ Դաւիթը փորձութեան ենթարկուածին ազատում է այլազգի Գողիաթից:

Իսկ ինչպէ՞ս, ի՞նչ կերպով է վարձատրում օգնող ու մխիթարող Տէրը փորձութեան ենթարկուածներին՝ փորձուողներին: Տե՛ս թէ ինչպէս: Նախ, նեղուածն ու փորձութեան ենթարկուածը արքայութեան ժառանգորդն են ըստ այն խօսքի, թէ՝ «Բազում նեղութիւններ կրելով է, որ պէտք է մտնենք Աստծոյ արքայութիւնը» (Գործք, ԺԴ.21): Ուրեմն ով օգնում է փորձութեան մէջ ընկածին՝ արքայութեան մէջ ընկեր կդառնայ նրան, քանզի աղքատներն ու փորձուողները արքայութեան ժառանգորդներ են Աստծոյ համար, իսկ նրանց օգնողները հաղորդակից են նրանց փառքին,

քանզի եթէ հաղորդակից են չարչարանքներին, ուրեմն հաղորդակից են նաեւ փառքին:

Երկրորդ՝ փորձուողներին օգնողներն ու մխիթարողները նման են հրեշտակի, որ իջնելով հնոցը՝ անցաւ կրակի միջով եւ փրկեց երեք մանուկներին, այդպէս նմանուեց Աստծոյ Որդուն, քանզի Նա օգնում է փորձութեան հնոցը ընկածներին:

Երրորդ՝ չարիքները, որ այս կեանքում մեզ նեղութիւն են պատճառում, ստիպում են առ Աստուած գնալ. բայց ինչպէս լծվարն է լծկան եզանը հետեւում, այնպէս էլ փորձուողներին օգնողն է հետեւում նրանց մինչեւ երկինք. «Իմ լուծը ձեր վրայ վերցրէք... եւ հանգիստ պիտի գտնէք» (Մատթ. ԺԱ.28):

Չորրորդ՝ փորձութեան մէջ ընկածին օգնողներն ու մխիթարողները նման են Սուրբ Աստուածածնին եւ Յովհաննէս Աւետարանչին, որոնք Յիսուսի խաչի մօտ էին գտնւում, որի համար եւ մխիթարուեցին, քանզի երկնային պատուի արժանացան իրենց ննջման ժամանակ. Քրիստոս երկինք բարձրացրեց նրանց հոգիները:

Հինգերորդ՝ փորձուողները նման են ասեղի: Ասեղի օգնութեամբ ոսկեթելն ու մետաքսը ամրացնում են արքաների թիկնոցների եւ ծիրանիների մէջ, թելը մնում է այնտեղ, իսկ ասեղը սահում դուրս է գալիս: Նման կերպ փորձուողներին օգնողները մնում են Քրիստոսի ծիրանի մարմնի մէջ, ու թէեւ փորձուողները կարող են շեղուել

բարի ընթացքից, սակայն նրանց օգնողները, միեւնոյն է, որպէս վարձատրութիւն հաստատուն են մնում ի Քրիստոս:

Վեցերորդ՝ փորձուողները Քրիստոսի նեղութիւններին ու վիրաւորանքին են արժանանում կամ Աստծոյ թոյլտուութեամբ չարչարանքներ են կրում աշխարհից ու բռնաւորներից (որն իրենց համար շատ աւելի լաւ է, քան թշնամու նենգ համբոյրը, Առակ. ԻԷ. 6), եւ նրանց օգնողները կարծես ծանրութեան կէսն իրենց վրայ են վերցնում, իսկ բեռի վարձատրութիւնը Աստծուց կստանան: Այսպէս Աբրահամը վարձատրուեց Մելքիսեդեկի կողմից Տիրոջ մարմնի եւ արեան օրինակով, քանի որ նրա բեռը կրեց՝ գերեալներին վերադարձնելով (Ծննդ. ԺԴ):

Մեծ ապերախտութիւն է ծառայի կողմից, երբ տեսնում է, որ իր Տէրը կռանում եւ օգնում է վայր ընկածին, բայց ինքը նոյնը չի անում: Այս մասին է Պօղոս առաքեալն ասում. «Օգնեց ինձ Աստուած, եւ ես ապրեցի առիւծի բերանի մէջ» (Բ Տիմ., Դ. 17): Իսկ անտարբերների մասին Քրիստոս գանգատւում է՝ Դաւթի բերանով ասելով. «...նայեցի, բայց ոչ ոք չկար, եւ ինձ համար մխիթարիչ չգտնուեց» (Սաղմ. ԿԸ. 21):

Ով օգնում է հաւատքի կամ այլ պատճառով փորձութեան մէջ ընկածին, նման է հրեշտակին, որ բանտից հանեց Պետրոս եւ Պօղոս առաքեալներին (Գործք, Ե. 19, ԺԲ. 7, ԺԶ. 26):

Իսկ նրանք, որ չեն օգնում, թող լսեն Դաւթի խօսքը՝ «Ում որ դու հարուածեցիր, նրանք հալածեցին եւ իմ վէրքերին ցաւեր աւելացրին» (Սաղմոս, ԿԸ. 27)։ Այդ անգութ մարդիկ նման են Նաբուգոդոնոսորի սպասաւորներին, որոնք անդադար բորբոքում էին հնոցի կրակը նաւթով, ձեթով, փայտով եւ վուշով, սակայն հնոցի բոցը իրենց էր այրում։ Իսկ Տիրոջ հրեշտակը հովանի էր լինում մանուկներին՝ նրանց անկէզ պահելով կրակից։

Եւ վերջապէս՝ Աստուած օգնում ու ազատում է ընկածներին եւ նրանց փոխարէն պատժում է օգնութիւնից խուսափողներին, որոնք կարող էին օգնել, բայց դա չեն անում եւ մահուան պատճառ են լինում։

ԵՐԱՇՏԻ ԵՒ ԱՅԼ ՊԱՏՈՒՀԱՍՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՂՕԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աստուած բնական բարիքները տալիս է առանց խնդրելու, քանզի բարեգութ Հայրը նախքան մեր խնդրելն արդէն գիտի, թէ ինչ է մեզ պէտք: «Ձեր բոլոր հոգսերը թողէ՛ք Նրան, քանի որ Նա է, որ հոգում է ձեր մասին»,- ասում է Սուրբ Պետրոսը (Ա Պետրոս, Ե.7): Սակայն քանի որ մեղքերի պատճառով վերցրեց բնական բարիքները մեզանից՝ արժանի պատիժներով վերցնելով պղինձը եւ երկաթը մեր ոտքերի տակից (հմմտ. Օրինաց ԻԸ.23), ուստի յետ դառնալով մեղքերից՝ պիտի աղօթքներով դիմենք Նրան, որ տայ արգելած բնական բարիքները: Այսպէս Եղիան խօսքով կապեց երկինքը անարժանների վրայ անձրեւելուց, եւ երբ Աստծոյ հրամանով արձակեց երկինքը իր բանադրանքներից, շինեց սեղան եւ զոհաբերութիւն կատարեց եւ ելաւ լեռան կատարը՝ աղօթելու: Եւ ապա Աստուած բացեց երկինքը եւ անձրեւ տուեց: Սուրբ Յակոբոսն ասում է. «Եղիան մարդ էր մեզ պէս չարչարուող: Աղօթեց, բայց չանձրեւեց: Դարձեալ աղօթեց, եւ երկինքը անձրեւ տուեց, եւ երկիրը աճեցրեց իր պտուղը» (Յակ. Ե.17):

Այդպէս մեղքերի պատճառով տեղի են ունենում երաշտ, հանկարծամահութիւն, սով, գերու-

թիւն եւ այլն, ինչպէս վկայում է Սողոմոնն իր աղօթքներում տաճարի նաւակատիքի ժամանակ. «Եթէ անձրեւ չլինի, իսկ նրանք աղօթք անեն այս վայրում, փառք տան Քո անուանը եւ Քեզնից ներում ստանալով՝ զղջան իրենց մեղքերի համար, ապա լսի՛ր երկնքում եւ ների՛ր Քո ծառաների մեղքերը» (Գ Թագ. Ը.35): Իսկ եթէ հարցնում ես՝ Քրիստոս ինչու՞ արգելեց արքայութիւնից եւ արդարութիւնից բացի որեւէ այլ բան խնդրել,- կպատասխանեմ՝ նրա համար, որպէսզի «այլ բաները» այլոք յաւելեն: Ասում եմ՝ ա՛յն պատուիրեց խնդրել, որը գերագոյն բարիքն է եւ ոչ թէ մեր գործերին զուգակիցը, եւ այն պէտք է աղօթքով խնդրել, որպէսզի Աստուած ձրի տայ, քանզի այն վեր է մեր կարողութիւններից ու արժէքներից, եւ դա առաքինութեամբ եւ սրբութեամբ պէտք է խնդրուի:

Ամէն ինչ զաւակներինն է, դրա համար էլ կաւելացուի նաեւ չխնդրածը: Իսկ եթէ չտրուի ու չաւելացուի, պատճառն այն կլինի, որ խնդրողները փորձութեան մէջ ընտիր երեւան: Աբրահամը Աստծուց որդի էր խնդրում, թէպէտ Աստուած տուեց, բայց նրա հաւատը երկար փորձելուց յետոյ միայն. այն, ինչ չէր տուել նրա երիտասարդութեան ժամանակ, տուեց ծերութեան հասակում: Գրիգոր Աստուածաբանն ասում է. «Աստուած ուշացնում է շնորհները, որ ցանկալի դարձնի եւ

փորձի խնդրողների հաւատը, թէ արդեօք չե՞ն յուսահատւում երկար խնդրելուց»:

Իսկ ինչի՞ց է, որ շատ անգամ խնդրում ենք, բայց չենք ստանում: Նախ՝ որ չարութեամբ ենք խնդրում, ըստ Յակոբոսի, այսինքն խնդրում ենք այն, ինչ Աստծուն վայել չէ տալ եւ օգտակար չէ մեզ համար: Եթէ մեծութիւն ենք խնդրում, չի տալիս նրա համար, որ Աստուած չի ուզում մեզ փորձութեան մէջ գցել (Ա Տիմ. Զ.9), որովհետեւ մեծութիւնները ասես փշեր լինեն, որ խեղդում են բարի սերմերը:

Երկրորդ՝ իսկ գուցէ խնդրում ենք երկմտութեա՞մբ: Մի՛ ակնկալիր երկմտութեամբ ստանալ ինչ-որ բան, որովհետեւ երկմտութիւնը նման է հողմակոծուող ծովի ալիքների:

Երրորդ՝ չգիտենք ինչ պէտք է խնդրենք, ճիշտ այնպէս, ինչպէս հիւանդը չէ, որ գիտի, թէ իրեն ինչ է պէտք, այլ բժիշկը: Օգոստինոսն[12] ասում է. «Ինչ Աստուած խոստանում է, անհո՛գ խնդրիր, այսինքն յաւիտեան կեանքը, իսկ ժամանակաւորը խնդրիր վախով եւ Աստծոյ կամքին յանձնելով: Եթէ օգտակար է՝ կտայ, իսկ եթէ վնասակար՝ կարգելի»: Ինչպէս որ արքայութեան մէջ աջ ու ձախ կողմերում նստել ցանկացող Որոտման որդիներին Տէրն ասաց. «Չգիտէք, թէ ինչ էք խնդրում»:

---

[12] Օգոստինոս Երանելի կամ Ավրելիոս Օգուստինոս (354 – 430 թթ.) - կաթոլիկ եկեղեցու աստուածաբան, հայրաբանութեան անուանի ներկայացուցիչ:

Չորրորդ՝ մեր աղօթքները չի իրականացնում մեր մեղքերի պատճառով, ինչպէս որ բժշկի օգտակար դեղը չի օգնում, եթէ հիւանդը կարգը չի պահպանում:

Հինգերորդ՝ չի տալիս խնդրածը, երբ գիտի վնաս կայ դրանից: Ինչպէս հայրը չի տալիս որդուն ժառանգութիւնը, երբ գիտի, թէ մեղքերի ճանապարհին վատնելու է այն: Իսկ եթէ անգամ տալիս է՝ բարկանում է, եթէ չի տալիս՝ ողորմում է: Այսպէս կրտսեր որդուն ժառանգութիւն տալն իրենց կամքով չէր, այլ՝ ի նշան բարկութեան, նմանապէս իսրայելացիներին մանանայ եւ լոր տալը, որովհետեւ կերակուրը դեռ նրանց բերանում էր, երբ Աստծոյ բարկութիւնը բորբոքուեց:

Վեցերորդ՝ խնդրածը չի տալիս ոչ թէ խնդրողի, այլ այն պատճառով, անարժան բաների համար է աղօթք արվում: Այսպէս Երեմիային ասաց. «Մի՛ աղաչիր դրանց համար, ողորմութիւն մի՛ խնդրիր, որովհետեւ քեզ չեմ լսելու» (Երեմիա Է. 16): Իսկ Աբրահամին լսեց Աբիմելէքի համար, որովհետեւ արժանի էր. սուրբ սրտով արգելեց Սառային եւ չմօտեցաւ նրան, որովհետեւ ցանկանում էր, որ եթէ ազատ է, օրէնքով առնի նրան կնութեան: Այսպիսի արգելանքներ շատ կան սուրբ գրքերում, թէ ինչ պատճառով Աստուած չի տալիս խնդրածները:

Եթէ մենք ցանկանում ենք, որ Աստուած հետեւի մեր կամքին, նախ մե՛նք ենք պարտաւոր հետե-

ւել Նրա կամքին: Մեծ յանդգնութիւն է, երբ ծառան է հրամայում տիրոջը եւ ոչ թէ հնազանդւում նրա հրամանին. ծառան երկրի վրայ հրամայում է, Տէրը՝ հնազանդւում (ինչպէս Եղիան եւ մեղքերից ազատողները), իսկ Տէրը երկնքից է հրամայում, բայց ծառան երկրի վրայ չի հնազանդւում տիրոջ հրամանին:

Շատերն ուրիշներին յորդորում են աղօթել, ինչպէս Սիմոն կախարդը եւ փարաւոնը, բայց իրենք չեն համաձայնւում նրանց աղօթքներին: Ահա մէկը օրհնում է բերանով, միւսը՝ անիծում գործով, իսկ Աստուած ում պիտի լսի՝ չգիտեմ (Սիրաք, ԼԴ. 29):

ԾՈՎՈՎ ԵՒ ՑԱՄԱՔՈՎ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂՕԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ Պօղոս առաքեալը Մելիտոն կղզուց պէտք է նաւարկեր, իր մօտ կանչեց Եփեսոսի երէցներին (Գործք Ի.17), շատ խորհուրդներ եւ յանձնարարութիւններ տալուց յետոյ բոլորի հետ մէկտեղ ծնկի եկաւ եւ սկսեց աղօթել: Երէցները շատ տխրեցին եւ մեծ աղաղակ բարձրացրին այդպիսի հօր եւ վարդապետի հեռանալու համար. «Բոլորն էլ շատ լաց եղան եւ Պօղոսի վզովն ընկնելով՝ համբուրում էին նրան» (Գործք. Ի.37): Մորմոքւում էին մանաւանդ նրա այն խօսքի վրայ, թէ այլեւս իր երեսը չեն տեսելու: Եւ այսպէս լալով՝ նրան ուղեկցեցին մինչեւ նաւ: Բոլորին յայտնի է, որ ծովում ալեկոծութիւններ կարող են լինել, իսկ ցամաքում՝ վիշտ եւ աւազակներ, այս պարագայում ճամբորդի պաշարն արժանաւոր մարդկանց աղօթքն է, ովքեր եղբայրաբար պարտաւորւում են օգնել, որպէսզի զերծ մնան ալեկոծութիւնից, գողերի ու աւազակների երկիւղից եւ խաղաղութեամբ հասնեն իրենց ժամադրավայրը:

Այս կերպ էին վարւում նաեւ Յովնանի նաւավարները. ամէն մէկը իր աստծուն էր աղօթում ալեկոծութիւնից փրկուելու համար, մինչեւ որ վիճակ գցեցին եւ գտան գողին (մեղաւորին):

Բայց եւ ճանապարհորդները ուրիշների աղօթքներին ապաւինելով՝ չպէտք է իրենցն էլ անտեսեն: Բիաս[13] փիլիսոփան նաւի մէջ էր ամբարիշտների հետ, եւ երբ ալեկոծութիւն բարձրացաւ, սկսեցին իրենց կուռքերին աղաղակել, որպէսզի փրկուեն: Բիասը կտրուկ ասաց նրանց. «Մի՛ աղաղակէք, որպէսզի ձեր չաստուածները մեր այստեղ լինելը չիմանան»: Նոյն բանը կարելի է ասել անպատրաստ ճանապարհորդների մասին, ովքեր ճանապարհի համար նիւթական պաշարը նախապէս հոգում են, իսկ հոգեւոր պատրաստութիւնը ուրիշների աղօթքին են թողնում: Ճանապարհորդ Պօղոսը նախ ինքը ծնրադրեց աղօթելու համար, եւ մնացածները նրան հետեւեցին: Բայց որովհետեւ ճանապարհորդները ամէն պահի չէ, որ կարող են աղօթքի մէջ լինել, հետեւաբար պէտք է վարձատրեն աղքատներին եւ եկեղեցուն, որպէսզի նրանք իրենց համար աղօթեն թէ՛ ծովի եւ ցամաքի որոգայթներից փրկուելու եւ թէ՛ իրենց գործերում եւ հանգստութեան մէջ ապահով մնալու համար, որպէսզի ճանապարհորդող եղբայրների հոգսը թեթեւացնեն:

Այսպէս Քրիստոս ընկերակից եղաւ անծանօթ աւազակին դրախտի ճանապարհին՝ ասելով. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. ԻԳ.43):

---

[13] Բիաս Պրիենացի (VI դ. Ք.ա.) - անտիկ յոյն իմաստասէր եւ հասարական գործիչ, յունական եօթ իմաստուններից մէկը:

Հետեւաբար եկեղեցու աղօթքը պէտք է ընկերակից լինի ճանապարհորդին, ինչպէս որ Ռաֆայէլը՝ Տոբիթին, որի համար Տոբիթն ասաց. «Քանի որ Աստծոյ բարի Հրեշտակը կառաջնորդի նրան, յաջողութիւն կտայ նրա ճանապարհին, եւ նա ողջ ու առողջ կվերադառնայ այնտեղից» (Տոբիթ Ե.27):

ԲՈԼՈՐ ՎՇՏԱՑԵԱԼՆԵՐԻ ԵՒ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՒԹՈՎ ԱՍՏԾՈՒՆ ԱՂՕԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սուրբ առաքեալը պատուիրում է հաւատացեալներին՝ ովքեր ի վիճակի են, պէտք է տկարների հոգսերը յանձն առնեն:

Քրիստոսի բարեկամ Ղազարոսը Աստծոյ փառքի համար հիւանդացաւ, եւ երբ Մարիամն ու Մարթան բարեխօսեցին նրա համար, Քրիստոս դժուար բան չհամարեց, այլ յանուն բարեկամի սիրոյ յարութիւն տուեց նրան:

Աստուած Աբիմելէքի տունը Սառայի պատճառով պատժեց, իսկ Աբրահամին ասաց, որ ամլութիւնից բժշկուելու համար պէտք է աղօթեն: Դաւիթը նոյնպէս գիտէր, որ իր մեղքերի պտուղ որդին Աստծոյ թոյլատրութեամբ էր հիւանդացել, այդուհանդերձ չէր դադարում Աստծուն աղօթելուց: Իսկ երբ պոռնկածին որդին մահացաւ, դրա համար չտրտմեց Դաւիթը, քանզի Աստուած նախատինքը վերացնելով՝ չկամեցաւ նրան թագաւոր դարձնել:

Ովքեր հիւանդների համար աղօթք են անում, առողջանան նրանք թէ ոչ՝ աղօթողները չպէտք է տրտնջան Աստծոյ դէմ, իբրեւ թէ եկեղեցում արուած իրենց աղօթքներն անտեղի եղան: Դրա պատճառը կարող է լինել այն, որ աղօթքները

ներքին կասկածամտութեամբ են արել ու չեն ասել՝ «Եթէ մեր աղօթքները հաճոյ են Քեզ, Տէ՛ր Աստուած, մեր հիւանդները թող բժշկուեն»:

Այս ամէնը հասկանալու համար Քրիստոսի օրինակն ունենք. երեք անգամ Աստուածորդին խոնարհութեամբ աղօթեց Հայր Աստծուն, որ եթէ հնարաւոր է՝ չարչարանքների բաժակը իրենից հեռացնի: Եւ մինչ Հայր Աստուած հրեշտակների միջոցով ազդարարեց անդարձելիութիւնը, Քրիստոս առանց տրտնջալու, սիրով ըմպեց՝ ասելով. «Եթէ ո՛չ, ապա կխմեմ այս բաժակից, թող Քո կամքը լինի» (Մատթ. ԻԶ.39): Քրիստոս գիտէր, որ Աստծոյ որոշումներն անդառնալի են, եւ Ինքն աշխարհ էր եկել չարչարանքների բաժակը խմելու համար, սակայն սա չի նշանակում, որ աղօթելը հակառակ էր Հայր Աստծոյ կամքին, այլ հէնց աղօթքով պատուեց Հօրը: Թէեւ Հայր Աստուած չանսաց, սակայն Քրիստոս իր աղօթքը վերջացրեց հնազանդութեամբ՝ «թող Քո կամքը լինի»:

Անկասկած Եկեղեցին պէտք է հիւանդների համար աղօթի, որը անում է, սակայն հիւանդն էլ պէտք է իր հերթին իմանայ հիւանդութեան պատճառը ու հասկանայ, որ այն մեղքից է ծնւում, որպէսզի կարողանայ բուժուել: Ինչպէս որ երեսունութամեայ անդամալոյծին մեղքից եւ հիւանդութիւնից բժշկեց Քրիստոս եւ պատուիրեց. «Ահաւասիկ առողջացար, այլեւս մի՛ մեղանչիր, որպէսզի աւելի չար բան չպատահի քեզ» (Յովհ.

Ե. 14): Հէնց մեղքերի պատճառով տասը հարուածներով պատժուեցին փարաւոնը եւ իր ամբողջ ժողովուրդը, իսկ Աստուած իսրայելացիներին ասաց. «Եթէ ուշադիր լսես քո Տէր Աստծոյ ձայնը, նրա համար հաճելի գործեր կատարես, ունկնդիր լինես նրա պատուիրաններին ու ենթարկուես նրա բոլոր հրամաններին, քեզ վրայ չեմ թափի բոլոր այն հիւանդութիւնները, որ թափեցի եգիպտացիների վրայ, քանզի ես եմ քեզ բժշկող Տէրը» (Ելք, ԺԵ. 26): Իսկ անաստուած եւ կռապաշտ Հորամ արքային Աստուած հարուածեց եւ որովայնի անբուժելի հիւանդութիւն տուեց. «Երեք օրերի ընթացքում նրա փորոտիքը դուրս թափուեց եւ չարաչար տանջուելով մեռաւ» (Բ Մնաց. ԻԱ.18):

Ուրեմն հիւանդները թող չտրտնջան, երբ աղօթքները չօգնեն նրանց, որովհետեւ իրենք պէտք է հիւանդութեան մէջ ապաշխարեն: Սիրաք իմաստունն այս մասին ասում է. «Մեղանչելու ժամանակ ցոյց տուր, որ դարձի ես գալիս» (Սիրաք, ԺԸ. 21): Այսինքն՝ խոստացի՛ր կեանքդ փոխել ի բարին: Իսկ եթէ մէկն անյոյս հիւանդ է, եկեղեցում աղօթողները նրա համար թող հաւատով դիմեն Տիրոջ մարմնի եւ արեան միջնորդութեանը: Որովհետեւ Քրիստոս անդամալոյծին բժշկեց նրան Իր մօտ բերողների հաւատի համար. «Եւ տեսնելով նրանց հաւատը՝ ասաց. –Վե՛ր

կաց, վերցրո՛ւ քո մահիճը եւ գնա՛ քո տունը» (Մատթ. Թ. 2, 6):

Կարող է նաեւ այնպէս պատահել, որ հիւանդը չբժշկուի. թո՛ղ դա Աստծոյ գիտութեանն ու տեսչութեանը, ինչպէս որ Պօղոս առաքեալն է ասում՝ «Իսկ եթէ մեռանք Քրիստոսի հետ, հաւատում ենք, թէ նրա հետ էլ կապրենք» (Հռոմ. Զ. 8):

ՈՐՔԱ՛Ն ՀԱՃԵԼԻ Է ԱՍՏԾՈՒՆ, ԵՐԲ ՄԷԿԸ ՄԵԾ Է ԿՈՉՈՒՄՈՎ, ԲԱՅՑ ԾԱՌԱՅՈՒՄ Է ԱՅԼՈՑ

Քրիստոս ամէնամեծն Աստուած ծառայութեան պաշտօնը սիրելու պատճառով երկնքից երկիր խոնարհուեց, որպէսզի խոնարհութեան դպրոց հիմնի. «Մարդու Որդին չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու եւ իր անձը տալու որպէս փրկանք շատերի փոխարէն» (Մատթ. Ի.28): Եւ կամենալով փառաւորել մարդկանց որդիներին՝ կարեւորեց ծառայութեան գաղափարը. «Ձեզանից ով կամենում է մեծ լինել, թող լինի բոլորից կրտսերը եւ բոլորի սպասաւորը» (հմմտ. Ղուկ. ԻԲ.26, Մատթ. Ի.26):

Ո՛վ մեծութիւն անբաղդատելի եւ բարձրութիւն անհասանելի: Բոլոր մեծ ծառերը փոքրիկ սերմից են աճում, եւ բոլոր գետերը փոքրիկ առուներից են գոյանում եւ վարարում: Այսպէս էլ Աստծոյ առաջ մեծերը փոքրից են բարձրանում մեծութեան փառքի աստիճանին, մինչեւ իսկ դառնում են Աստծուն սեղանակից եւ հասնում Քրիստոսի սպասաւորած՝ արքայութեան սեղանին մասնակից լինելու աստիճանին: Սրա համար է ասւում, թէ որքան որ կարողութիւնդ բաւականացնում է՝ ջանա՛ ծառայել, մինչեւ որ բաղձանքիդ համապատասխան հասնես բարձր աստիճանի: Ով

պատրաստակամ է ծառայելիս, նա ի վերջոյ հասնում է փառքի: Նաբաղի կին Աբիգեան Դաւթի ծառաների ոտքերը լուանալ խոստանալով միայն Դաւթի կինը դարձաւ (Ա Թագ. ԻԵ.41):

Ո՛վ փոքրաւոր մանուկներ, դուք, որ սպասաւորում էք գիտունների սեղանները, գիտէ՞ք ինչ բարոյականութիւն եւ իմաստութիւն էք ուսանում: Մինչ դուք մեծաւորների սեղանն էք պատրաստում, միաժամանակ նրանց հոգեւոր սեղանի իմաստութեանն էք մասնակից լինում, նրանցից դաս էք առնում պարկեշտ զրոյցների, չափաւոր ուտելու եւ ըմպելու մասին: Սաբայի թագուհին երանի տուեց Սողոմոնի ծառաներին եւ աղախիններին, ինչո՞ւ, որովհետեւ «քո առաջ են եւ լսում են քո իմաստութիւնը» (Գ Թագ. Ժ.8):

Խօսողը սերմանող մշակ է, լսողը՝ ընդունող եւ պտղաբերող հող: Ասում է՝ մի անգամ ելաւ սերմնացանը սերմանելու: Սերմի մի մասն ընկաւ բարեբեր հողի մէջ եւ երեսնապատիկ, վաթսունապատիկ եւ հարիւրապատիկ պտուղ բերեց (հմմտ. Մատթ. ԺԳ. 4-9): Յիրաւի մենք մեր ուսուցիչներից (որոնք իմաստուն վարդապետների հետ սեղան էին նստում) աւելի շատ իմաստութիւն սովորեցինք, քան՝ դասերը սերտելիս: Նրանց երբ իմաստունը լսի, է՛լ աւելի իմաստուն կդառնայ, իսկ հանճարեղը առաջնորդութիւն կստանայ, ինչպէս ասում է Սողոմոն Իմաստունը՝ «կթափանցի

իմաստունների խորին մտքերի եւ նրանց այլաբանութիւնների մէջ» (Առակք, Ա.6):

Պիւթագորասն[14] իմաստութեան հիմքը լռութիւնն էր համարում: Նա աշակերտներին հինգ տարի թոյլ չէր տալիս խօսել, որպէսզի նախ եւ առաջ լսելով սովորեն խօսելու արուեստը: Երբ Սոկրատէսի աշակերտ Արիստիպոսին հարցրին, թէ ի՞նչ է ուսանել փիլիսոփայութիւնից, նա պատասխանեց՝ ճիշտ խօսելու եղանակը: Արիստոտելին եւս հարցրին, թէ ի՞նչ է շահել փիլիսոփայութիւնից, եւ նա ասաց. «Առանց հրամանի եմ անում այն, ինչ ուրիշները օրէնքից վախենալով են անում»:

Ո՛վ մանուկներ եւ մեծատուների ծառաներ, ուշ դրէք եւ մի՛ զլացէք իմաստուններին ծառայել, թէեւ երբեմն կարող էք նախատուել, բայց իմացէ՛ք, որ ձեր տէրերը նման են քանոնի. ուղղում են ձեր ծուռ բարքերը, տաշում ձեր անհարթութիւնները, չեն կամենում ձեր վատը տեսնել, բժիշկների նման հալածում են ձեր հիւանդութիւնները:

Արիստոտելն ասում է, թէ **խրատի արմատը դառնահամ է, սակայն պտուղը՝ քաղցր**: Թէ՛ ծնողները, թէ՛ ուսուցիչները, որոնք վարժել են սաներին, աւելի մեծ պատուի են արժանի, քան սոսկ ծնողներ ու վարժապետներ: Գիտութիւնը զարդ է յա-

---

[14] Պիւթագորաս (մօտ 569 - 475 Ք.ա.) - յոյն անտիկ մաթեմատիկոս եւ փիլիսոփայ:

ջողութիւնների ժամանակ եւ ապաւէն՝ ձախորդութիւնների դէպքում:

Ինչպէ՞ս պէտք է առաջադիմեն լաւ աշակերտները. պէտք է առաջ ընթացողներին հետեւեն ու յետ մնացողներից հեռու մնան: Ոչ ոք չի կարող բարի առաջնորդ լինել, եթէ նախ բարի առաջնորդին հնազանդ չի եղել: Անապատի սուրբ հայրերը նորեկ աշակերտներին նախ երկրորդական ծառայութիւն էին առաջարկում եւ փորձում էին նրանց համբերութիւնը իրարամերժ հրամաններով: Պողը գնաց աշակերտելու Մեծ Անտոնին[15]: Վերջինս նրան յանձնարարեց խսիրի պարան հիւսել: Պողը հիւսեց եւ երբ արդէն բաւականին հիւսել էր, սուրբ հայր Անտոնը նրան փորձելու համար ասաց. «Փչացրի՛ր ամբողջը, որդյակ, քանդի՛ր», եւ Պողը սկսեց առանց տրտնջալու քանդել:

Իսկ այնպիսի մեծերը, որ նուաստներին ծառայելով պատուելի են դառնում, յիրաւի հազուագիւտ են: Յուլիոս կայսրը զօրապետ եղած ժամանակներից ի վեր ուրիշներին թեթեւ ծառայութիւններ էր առաջարկում, իսկ իր համար ծանրերն էր ընտրում: Սենեկան[16] նրա մասին ասում է, թէ բոլորի տները նրա հսկողութեամբ էին պաշտպանուած, ամենքի ապահովութիւնն իր խնդիրն

---

[15] Անտոն Մեծ (Սուրբ Անտոն) (251 – 356 թթ.) - ճգնաւոր, Հայ Առաքելական Եկեղեցու տօնելի սուրբերից:

[16] Լուկիոս Անէուս Սենեկա (Սենեկա կրտսեր, Ք.ա. 4 – Ք.յ. 65 թթ.) – հին հռոմէացի փիլիսոփայ, պոետ եւ պետական գործիչ:

էր համարում: Մի անգամ պարսիկների դեսպանն եկաւ ու տեսաւ, որ Յուլիոսը ցերեկը ննջում էր եւ ասաց. «Մի՞թե սա է Յուլիոսը՝ աշխարհի արեւը, արթունն ու զգաստը, որ քնել է ցերեկով»: Սենեկապանը պատասխանեց. «Մի՛ զարմացիր, որ Յուլիոսը ննջում է ցերեկը, քանի որ երբ բոլորը գիշերը քնում են, միայն նա է արթնութեամբ հսկում»:

Պարսից Արտաշէս[17] արքան մի օր իր զօրքերի հետ գնաց անտառ եւ ասաց. «Ինչ որ անեմ, նոյնը դուք արէք», եւ սկսեց փայտ կոտրել: Բոլորը նրա հետ միասին սկսեցին փայտ կոտրել: Մինչեւ երեկոյ աշխատեցին: Երկրորդ օրը զօրքի համար մի պատուական ընթրիք կազմակերպեց եւ աւարտին հարցրեց, թէ ո՞րն էր լաւ, երեկուայ աշխատե՞լը, թէ՞ այսօրուայ հաճոյքը: Պատասխանեցին՝ այսօրուայ հաճոյքը: Արքան ասաց. «Եթէ երեկուայ պէս աշխատէք պատերազմի ժամանակ, միշտ այսօրուայ պէս կվայելէք արդիւնքը»: Ի՞նչ էք կարծում, այս օրինակից զօրքն ի՞նչ արդիւնք կունենայ: Նոյն կերպ վարուեց հնում նաեւ Աբիմելէքը, թէպէտ նրա արածը չար մտքով էր (Դատ. Բ. 41):

Եւ դո՛ւք, մեծաւորներ եւ իշխաններ, ձեր ծառաներին եւ փոքրաւորներին բարի գործ տալիս աջակի՛ց եղէք նրանց ծառայութեան մէջ: Թող

---

[17] Աքեմենեան Պարսկաստանում Արտաշէս (Արտաքսերքսէս) անունով երեք գահակալ է եղել, որոնք թագաւորել են Քա. 465-338 թթ. միջակայքում:

սպասաւորելը ձեզ ծանր չթուայ. Քրիստոսին ծանր չթուաց աշակերտների ոտքերը լուանալը եւ նրանց ծառայելը: Աբրահամը օտարներին յոտնկայս էր ծառայում եւ նրա կինը՝ Սառան խմոր հունցելով հաց էր թխում: Ինչ պակասութիւն եղաւ նրանց այն փոքր եւ աննշան ծառայութիւնից. որդի չունէին եւ աւետիս ստացան:

ՊԱՐՍԱԻԵԼԻ ՈՒ ԵՐԿԱՐ-ԲԱՐԱԿ ՇԱՏԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Շատախօսութիւնն առաջ է գալիս իմաստութեան պակասից: Շատախօսները կամ կրկնաբանութեամբ են զբաղւում, կամ իրենց միտքը համառօտ չեն կարողանում ներկայացնել, որի համար էլ երկարախօսում են: Փիլիսոփաներից մէկն ունկնդրում էր մի երկարախօսի, ապա ասաց. **«Այս մարդը ոչ թէ խօսելու գիտութիւն ունի, այլ՝ լռելու անկարողութիւն»**: Մի անգամ Սոկրատեսը նստած էր բազմութեան մէջ, բոլորը խօսում էին, իսկ ինքը լռում էր, ոմանք ասացին՝ «Սա կամ ոչինչ չգիտի, կամ յիմար է»: Սոկրատէսը պատասխանեց՝ «Յիմարը երբէք չի կարող լռել»:

Իմաստնագոյն կենդանիները սակաւաձայն են, ինչպէս օրինակ օձը, իսկ շատախօսները նմանւում են կոկռացող ագռաւների կամ լեզուագար կանանց:

Շատ խօսելը յաճախ թուլութիւնից է գալիս, օրինակ՝ շների մէջ առաւել շատ հաչում է տկարագոյնը: Իսկ արու կատուների մէջ առաւել բարձր է չճում թոյլը, մինչդեռ զօրեղը խրոխտանում է իր մարմնի անդամներով եւ ոչ թէ աղաղակներով: Երբեմն որոշ մարդիկ կամենում են իմաստուն երեւալ, ուստի շատախօսութեանն են ապաւինում, իմացած-չիմացածի մասին երկար-

բարակ մանում են: Այսպիսիք նոյնիսկ կամենում են ճշմարտութեան վարդապետներ լինել. իրենք էլ չեն իմանում ինչ են խօսում, ոչ էլ հասկանում են այն բաները, որոնց վրայ պնդում են (Ա Տիմ. Ա.7): Հէնց այդպիսին էր Դիոնիսիոս Սիցիլիացի բռնակալը, որն ասաց Արիստիպոսին՝ «Արի փիլիսոփայութիւնից խօսենք»: Իսկ վերջինս պատասխանեց՝ «Դու իմ խօսելն ես ցանկանում, բայց երբ իմ խօսելու պահը գալիս է, դու սկսում ես ինձ ուսուցանել»: Ասուածի վրայ բարկացաւ Դիոնիսիոսը եւ հրամայեց նստել վերջին տեղում, իսկ փիլիսոփան ասաց՝ «Ինձ այդտեղ նստեցնելով պատուական տեղն ես կամենում տալ»:

Սոկրատէսին հարցրին, թէ **ինչպէ՞ս կարող է մարդը հաճոյ դառնալ այլոց: «Բարին գործելով եւ քիչ խօսելով»**,- պատասխանեց նա: Դրա համար է, որ երբ Աստուած կամեցաւ աշտարակը շինողների չար գործը դադարեցնել, ոչ թէ նրանց ձեռքերը վնասեց, այլ շատախօսութեան առիթ տուող լեզուները խառնեց ու բազմացրեց, որի արդիւնքում չկարողացան հաղորդակցուել ու դադար տուին շինութեանը:

Շատախօսութիւնը մի կարկատան է, որով շատերը կամենում են իրենց սխալները կարկատել, ինչպէս՝ Կայէնը, որին Աստուած սաստեց եւ ասաց՝ «Եթէ մեղանչել ես՝ լո՛ւռ եղիր» (Ծննդ. Դ.7):

Կան այնպիսի մարդիկ, որոնք նոյնիսկ իրենց չվերաբերող խօսքին լրբութեամբ են միջամտում:

Նմանների դէմ է Սողոմոնն ասում. «Ով առանց բան լսելու պատասխան է տալիս՝ անզգամութիւն է նրա համար եւ նախատինք» (Առակ. ԺԸ. 13): Իսկ Սիրաքն ասում է. «Քանի դեռ չես լսել՝ մի պատասխանիր եւ մի՛ միջամտիր խօսակցութեանը» (Սիրաք, ԺԱ.8), այսինքն՝ այլոց խօսքը կիսատ թողնելով՝ մի՛ միջամտիր: Այդպիսիք բնութիւնից պատժուած են, բայց դա չեն հասկանում, քանզի շատախօսութեամբ ատելի են դառնում շատերի համար, սուտն ու ճիշտը խառնում են իրենց խօսքին, սխալւում են թէ՛ հաւատալու, թէ՛ ստանալու մէջ: Աւելի լաւ է լռելով սովորեն գիտուններից, քան թէ իրենց փուչ խօսքը քամուն տան:

Կան նաեւ այնպիսի մարդիկ, որոնք գիտնական միջավայրում փորձում են պատմութիւններ անել, որպէսզի խափանեն գիտունների խօսքն ու իրենցը առաջ մղեն, որպէսզի յանկարծ լռելով տգէտ չհամարուեն, քանի որ չգիտեն լռութեան գինը: **Եթէ մէկը քեզ բան է ասում, բերանդ փակիր եւ ականջդ բացիր**,- ասում է Սիրաքը: Դաւիթը շատախօսների թշուառութիւնը ցոյց տալով ասում է՝ «Չարալեզու մարդը յաջողութիւն չի՛ ունենայ երկրի վրայ» (Սաղմ. ՃԼԹ. 12): Ուստի եւ Աստուած կամեցաւ Մովսէսին ծանրախօս դարձնել, որպէսզի մեծ եղբօր՝ Ահարոնի առաջ ճարտասանութիւն չանէր եւ կարգը պահպանէր ըստ հրեշտակների: Այդպէս են ճանաչում մեծերին, իսկ փոքրերը լուսաւորւում են՝ լսելով մեծերին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՈՒԼՈՒԹԵԱՆ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հրեշտակները թէեւ չեն աշխատում, բայց յարատեւ արթնութեամբ ծառայութեան մէջ են մնում, այդպէս են նաեւ երկնային մարմինները: Ադամը դրախտում բնակեցուեց՝ այնտեղ աշխատելու եւ այն պահելու համար:

Աշխատութեան օգտակարութեան մասին մեզ սովորեցնում են այգիները, հանդերն ու պարտէզները, որոնց եթէ չհետեւես՝ խոպան կդառնան եւ որպէս ծոյլերին պատժամիջոց՝ բերք ու բարիք չեն տայ: Առաքեալն ասում է. «Այն ձեռքը, որ չի վաստակում, թող չուտի»: Իսկ ըստ Դաւթի՝ «Դու քո ձեռքի վաստա՛կը պիտի ուտես, երանի՛ է քեզ, դա լաւ պիտի լինի քեզ համար» (Սաղմ. ՃԻԷ.2):

Մարդուն ապաշխարութեան եւ պահքի դիմաց աշխատանքն ու քրտինքը տրուեց, որպէսզի ծուլութեան պատճառով առաջ եկող վնասը քրտինքով հեռու վանուի եւ փոխարինուի Աստծու սիրով:

Աշխատանքով մարդը նաեւ երկնային բարիքներ է ստանում: Մեր Փրկիչն իր մանկութիւնից ի վեր կոփուեց չարչարանքների մէջ, յանդիմանեց քնատ կոյսերին, հրապարակում պարապ կանգնող ծոյլերին: Իսկ աշխատասէրների համար ասաց. «Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածներդ ու բեռնաւոր-

ուածներդ, եւ ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ. 28):

Աշխատանքը թեթեւացնում է մարմինը, քանզի քրտինքի միջոցով վատնւում են աւելորդ իւղերը, աւելանում է ուժը, հեռանում է վնասակար ցուրտը, առատանում են հոգեւոր եւ մարմնական հարստութիւնները, բացւում են բնութեան կալուածքները: Իսկ թէ ծուլութիւնն ինչքան վնասակար է եւ Աստծու պատժին արժանի, տե՛ս թէ ինչպէս է նկարագրում Եսային. «Եւ կթողնեմ իմ այգին, եւ այն չի էտուի եւ չի մշակուի, այնտեղ փուշ կաճի խոպան հողի նման» (Եսայի, Ե.6):

Աշխատութեամբ ունեցուածքն էլ է քաղցրանում, փափկում է վարելահողը: Ո՞վ է հանգստի արժանանում, եթէ ոչ աշխատողը: Աշխատանքը մերկ մարդուն հագցնում է, սովածին՝ յագեցնում, օտարականին օթեւան է տալիս, ճամբորդին ձեռքին՝ ցուպ: Իսկ հոգին առաքինութեամբ է զարդարում: Պլատոնն ասում է. **առաքինութեան ճիւղերը քրտինքով եւ աշխատութեամբ են ծլարձակում**:

Այն ամէնը, ինչ ստեղծել է Աստուած, ինչքան էլ որ գաղտնախորհուրդ լինի, միեւնոյն է՝ աշխատանքը շարժման մէջ դրեց դրանց: Բոլոր երկնային մարմինները անդադար շարժման մէջ են: Ջուրը կնեխի, եթէ չշարժուի: Հուրը կհանգչի, եթէ անընդհատ չսնուցուի: Օդը կպղտորուի, եթէ չտատանուի, իսկ հողը վայրի խոպանի կվերածուի,

եթէ չվարուի: Սուրը կժանգոտի, եթէ չբանեցուի, լաթը կմգլոտի եւ կցեցոտի, եթէ յաճախակի չօգտագործուի:

Հասարակ բնութիւնը նոյնպէս աշխատանքի է ձգտում՝ ծնում է, շինում է, ձեւ է տալիս եւ եղծում, ծաղկեցնում է եւ ցամաքեցնում: Վերգիլիոսն[18] ասում է՝ յարատեւ աշխատանքը յաղթում է ամէն տեսակի դժուարութեան: Բայց **Աստուած գրեթէ ոչ մէկին ձրի եւ առանց աշխատանքի որեւէ բան չի պարգեւել**:

Աշխատանքը բարի համբաւի մայրն է: Յաղթողներն ու հռչակաւոր մարդիկ աշխատանքով են երեւելի դարձել: Քաղաքներ կառուցողներն ու երկրներ շէնացնողները յաւերժական յիշատակի են արժանացել: Դեմոկրիտէսն[19] ասում է. յօժարապէս կատարուող աշխատանքը ձանձրանալի չէ եւ ծանր չի թւում: Երմոնիային հարցրին, թէ որտեղի՞ց է իմաստութիւն ստացել, պատասխանեց՝ աղքատութիւնից եւ փորձառութիւնից: Իսկ Սիրաքն ասում է՝ «Անցնում էի ծոյլի արտով, իսկ այն լի էր փշերով»: **Ծուլութիւնը ամէն տեսակի մոլութիւնների դպրատուն է**: Յղփութեամբ ուտելուց եւ դատարկաբանութիւնից ապականուեցին

---

[18] Պուբլիոս Վերգիլիոս Մարո (Ք.ա. 70 - Ք.յ. 21 թթ.) - Հին Հռոմի մեծագոյն բանաստեղծներից մէկը, հռոմէացիների ծագումը գովերգող «Էնէական» պոեմի հեղինակը:

[19] Դեմոկրիտէս - յոյն փիլիսոփայ (Ք.ա. 460 – 370 թթ.), ատոմական տեսութեան առաջին արտայայտողը:

սոդոմայեցիները եւ հրով ու ծծումբով կործանուեցին: Կալէնոս բժիշկն ասում է, թէ առանց աշխատանքի անհնար է առողջութիւնը պահպանել եւ քաղցրաբար ննջել:

Եթէ լեզու ունենար աշխատանքը, կասէր՝ «Առանց ինձ երբեք չէք կարող պարծենալ»:

ԸՆԿԵՐՆԵՐԻ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀՈԳ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աստծոյ երանելի ծառաները ոչ միայն այս կեանքում, այլեւ մահուանից յետոյ էին հոգ տանում այլոց փրկութեան համար: Իսահակը կամենում էր օրհնել Եսաւին եւ ինչ-որ պատճառ հնարեց նրան օրհնելու՝ լեռնական որսով, թէպէտ Աստուած նրա եղբօրը՝ Յակոբին փոխանցեց օրհնութիւնը:

Յեսու Նաւէն, որ որդիներ չունէր, Իսրայէլի ազգն ինչպիսի՞ պատուիրաններով պարսպեց,- ուխտի մէջ պինդ լինել, հաստատուն մնալ աստուածապաշտութեան եւ երկիւղի մէջ, պաշտել Աստծուն ուղղամտօրէն եւ արդարութեամբ (Յեսու, ԻԴ.14):

Նոյնպիսի կտակ աւանդեց նաեւ Դաւիթը Սողոմոնին. «Ես անցայ իմ կեանքի ճամբան, դու զօրացի՛ր եւ տղամարդ եղիր, պահի՛ր քո Տէր Աստծոյ հրամանները ըստ Մովսէսի օրէնքների գրքի» (Գ Թագ. Բ.2-3):

Նոյնպէս եւ ծերունի Տոբիթը, որն իր կեանքում հայր եւ մայր էր աղքատների եւ անտէրունչ մեռնողների համար, մահուան ժամանակ կտակ աւանդեց իր որդուն՝ ասելով. «Բայց դու կկատարես օրէնքներն ու բոլոր հրամանները. եղի՛ր ողորմած

ու արդար, որպէսզի քեզ համար բարի լինի... որդեա՛կ իմ, դու տե՛ս, թէ ի՞նչ է անում ողորմութիւնը, կամ ինչպէ՛ս է փրկում արդարութիւնը» (Տոբիթ, ԺԴ.11)։ Այդպէս մեռաւ Տոբիթը՝ բարի վախճանով եւ լի փառքով։

Մատաթիա Մակաբայեցին մեռնելիս այսպիսի խրատ տուեց որդիներին՝ Աստծոյ օրէնքների հանդէպ նախանձախնդի՛ր եղէք, ձեր անձերը նուիրաբերէ՛ք հայրերի կտակների պաշտպանութեանը (Ա Մակ. Բ.50)։

Իսկ երանելիներն ընկերների փրկութեան համար ինչե՞ր միայն չարեցին իրենց կեանքում։ Մովսէսը, Եգիպտոսում եղբայրակիցների չարչարանքից տագնապած, թողնում է փարաւոնի դստեր զգուանքները եւ իբրեւ ապագայ փրկութեան առհաւատչեայ՝ սպանում եբրայեցիներին տանջող եգիպտացուն (Ելից. Բ.12)։ Արեւակէզ ու ցրտահար՝ Յակոբը պահում էր Լաբանի աներոջ հօտերը։ Իսկ Դաւիթը արջ եւ առիւծ էր սպանում եւ նրանց երախից ազատում էր յափշտակուածներին, իր ազգի փրկութեան համար զինւում էր Գողիաթի դէմ։

Իսկ ամենափրկիչն Իր կեանքով մարտնչում էր մահուան դէմ՝ Իր անձը դնելով հօտի համար։ Այդպէս էին վարւում Նրան հետեւող բոլոր առաքեալներն ու առաքելական սուրբ հայրապետները՝ մարտնչելով ընդդէմ հերձուածողների, մարմնի, աշխարհիկ բարքերի եւ սատանայի։

Ուրեմն եւ ամենքը պէտք է հոգան ոչ միայն իրենց, այլեւ ընկերների եւ զաւակների փրկութեան համար, որպէսզի Հեղի քահանայի պէս որդիներին անխրատ թողնելով՝ չլսեն Աստծուց, թէ՝ «Հեղիի տան անօրէնութիւնները խնկերով եւ զոհերով քաւութիւն չի ստանայ յաւիտեան» (Ա Թագ. Գ.14):

Անմտութիւն է յուսալ, թէ կարող ես փուշ տնկել, բայց վարդ քաղել, չարը սերմանել եւ բարին գտնել, որոմ ցանել եւ ցորեն հնձել, օձերին կերակրել եւ աղաւնի հաւաքել: Մարդկանց փրկութեան համար Աստուած չխնայեց իր որդուն, լաւ համարեց որդու մեռնելը մարդկութեան մեղքերի համար, քան թէ որդին կենդանի մնայ, բայց մեղքը թագաւորի աշխարհում:

Աշխարհի միակ փիւնիկ Յիսուս Քրիստոս իր անձը դրեց մեր փրկութեան համար, մենք եւս գոնէ մարդկանց օգնելով եւ խրատով մեր անձերը պէտք է դնենք ընկերների եւ զաւակների համար՝ կրթելով Աստծոյ երկիւղով եւ ազատելով սատանայական որոգայթից:

Յուդա առաքեալն իր թղթերում ասում է. «Կշտամբէ՛ք նրանց, որ դատապարտուած են, փրկէ՛ք նրանց՝ խլելով կրակի ճիրաններից, իսկ ուրիշներին ողորմեցէք՝ դատելով երկիւղով» (Յուդ. 22):

Ոսկեբերանն իր ԿԴ ճառում ասում է. «Եթէ զինուորը մտածի միայն իրեն ապրեցնելու մասին, ուրիշներին էլ իր հետ կկործանի, իսկ եթէ

ուրիշների համար մտածի, իրեն եւս կապրեցնի»: Մենք էլ նոյն կերպ ուշադիր պիտի լինենք ամենքի փրկութեան համար, միայն մեր շահը չփնտրենք, «այլ իւրաքանչիւր ոք ընկերոջ շահն էլ թող փնտրի» (Փիլ. Բ.4):

Եթէ ինչ-որ անդամ ցաւի, անշուշտ հնար կգտնես այն բժշկելու համար: Բայց չէ՞ որ մենք էլ այդպիսի անդամներ ենք եւ հիւանդանալիս անխնամ չպիտի մնանք: Կարող ես ասել՝ դաժան ու անմիտ է ընկերդ, որեւէ խրատ չի լսում. անգամ եթէ այդպէս է՝ յիշիր, որ բժիշկը առողջների՛ն պէտք չէ, առաւելապէս այդպիսի՛ ընկերոջը բարեկամ եղիր, որպէսզի քո վարքից ազդուելով՝ խոնարհուի եւ ուղղուի:

Քանի՞ անգամ ես խրատել, եւ չի լսել,- շա՛տ: Եթէ ամբողջ կեանքումդ էլ խրատած լինես նրան, դա չպէտք է չարչարանք համարես, ինչպէս որ քսակիդ դատարկուելիս չես նեղւում, եթէ այն տալիս ես բժիշկներին առողջութեանդ համար:

Ահա այդպէս Աստուած մեզ խրատում է մարգարէների եւ առաքեալների օգնութեամբ, եւ եթէ նոյնիսկ չենք լսում, Նա երբէք չի դադարում խրատելուց: Յովհաննէս աւետարանիչը ննջման ժամանակ Աստծուն ասում է. «Ո՛վ Տէր, երբէք չես դադարում, այլ միշտ փրկում ես կորուսեալներին»:

Եթէ արեւին նայող կամ աղբիւրի մօտ գնացող չլինէր, նրանք կդադարէին լոյս եւ ջուր տալուց: Ինչպէս անում է Աստուած, նոյնը արա՛ եւ դու.

եթէ պտղաբերեն ընկերդ եւ զաւակդ, նրանց բարիքից դու եւս բաժին կունենաս, իսկ թէ ոչ՝ դու գուցէ կիամարուես պարտքդ վճարած, իսկ նրանք՝ պարտական։

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՈՐԵՒԷ ՄԷԿԻՆ ՉՊԷՏՔ Է ԳԱՅԹԱԿՂԵՑՆԵԼ,

ՆԱԵՒ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԷ ՈՐՔԱՆ ՉԱՐԻՔ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գայթակղութիւն է դիւրահաւատներին մոլորեցնելը թէ՛ հաւատքի մէջ եւ թէ՛ բարի գործերում: Նաեւ երբ նրանց ներքաշում են սխալ ու մոլար հաւատքի մէջ կամ յետ են պահում բարի ընթացքից, որ հաւատքից է բխում, եւ առաջադիմութիւնից, որ առաքինութիւնից է ծնւում:

Երկու բան Աստուած ասաց ղեւտացիներին՝ համրին չվիրաւորես, կոյրի ոտքերի առաջ խութ եւ խոչ չդնե՛ս (Ղեւտ. ԺԹ.14): Համրը եւ խուլը ամէնապարզամիտն են հաւատի մէջ, որ չեն վիճում իրենց հաւատալիքների շուրջ: Իսկ կոյրն էլ ամէնապարզամիտն է բարի գործերի մէջ, քանզի անկեղծութեամբ է ընթանում Աստծոյ պատուիրանի ճանապարհով՝ առաջնորդուելով Տիրոջ խօսքերի լոյսով, ըստ որի՝ «Քո պատուիրանները իմ ոտքերի համար ճրագներ են» (Սաղմ. ճԺԸ. 105): Ովքեր գայթակղեցնում եւ շեղում են հաւատքից եւ բարի ընթացքից, կմարի նրանց մտքի ճրագի լոյսը, կամ էլ նրանց ոտքը քարին կդիպչի,

որպէսզի վայր ընկնեն եւ յետ կանգնեն այդպիսի ընթացքից:

Փարիսեցիները եւ դպիրները հաւատքի քար էին դնում Քրիստոսին անկեղծութեամբ հաւատացողների ոտքերի տակ, եւ դրա՛ համար Տէրը ասաց նրանց. «Եւ ով ինձ հաւատացող այս փոքրիկներից մէկին գայթակղեցնի, նրա համար լաւ կլինի, որ նրա պարանոցից էշի երկանաքար կախուի, եւ նա սուզուի ծովի խորքը» (Մատթ. ԺԸ.6):

Այդ ժամանակներում մարդիկ կային, որ փորձում էին բանականութեան կշռով չափել հաւատքը, ընդ որում ջատագովում էին, թէ հաւատքն աւելին է, քան բանականութիւնը: Եւ պարզամիտ մարդկանց համոզում էին, թէ սուրբ պատուիրանների արգելած մեղքերը շատ կարեւոր չեն, որով նրանց վրայ էին բերում արագահաս մի կորուստ՝ ասելով, թէ ամէն ինչ սրբերի համար սուրբ է, եւ ամէն ինչ իմաստունների համար բարի է, եթէ միայն պատշաճ կերպով գործածեն: Ինչպէս օրինակ՝ արուագիտութիւնը, գողութիւնը, ուրիշի ունեցուածքը իւրացնելը, վաշխառութիւնը եւ այլ մեղքերն իմաստուն մարդկանց համար մեղք չեն համարուի, եթէ չափաւոր օգտուեն դրանցից:

Յեսու Նաւէն այսպէս ասաց. «Իմացա՛ծ եղէք, որ Տէրն այլեւս չի կոտորի այն ազգերին ձեր առաջ, եւ նրանք ձեզ համար որոգայթ եւ գայթակղութիւն կլինեն, խոչընդոտ՝ ձեր գարշապարների համար

եւ նետեր՝ ձեր աչքերի համար, մինչեւ որ կորչէք այս բարի երկրից, որ տուեց ձեզ ձեր Տէր Աստուածը» (Յեսու, ԻԳ.13): Իսկ Պօղոս առաքեալն այսպէս ասաց. «Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ո՛ւշ դրէք այնպիսիներին, որ հերձուածներ եւ գայթակղութիւններ են առաջ բերում այն վարդապետութիւնից դուրս, որը դուք սովորել էք. եւ խորշեցե՛ք նրանցից, որովհետեւ այնպիսիները մեր Տիրոջը՝ Քրիստոսին չեն ծառայում, այլ իրենց որովայնին. եւ քաղցրախօսութեամբ ու կեղծ գովասանքներով հրապուրում են անմեղների սրտերը» (Հռոմ. ԺԶ. 17-18):

Իսկ ինչպէ՞ս են պատժուելու նման մարդիկ: Նախ՝ հաւատքի մէջ գայթակղեցնողները կորստեան կմատնուեն նոյն որոգայթով, ըստ այն խօսքի, թէ՝ ով քարը բարձր նետի, այն իր գլխին կընկնի:

Երկրորդ՝ ովքեր բարի ընթացքից շեղում են մարդկանց, փոս փորելիս կսայթաքեն եւ իրենք այնտեղ կընկնեն. «Ով հոր փորի, նրա մէջ կընկնի, եւ ով որոգայթ լարի, կբռնուի նրա մէջ» (Սիրաք, ԻԷ. 29):

Սուրբ Աւետարանի մէջ երեք գլխաւոր մեղքեր են յիշւում դատապարտութեամբ եւ քամահրանքով հանդերձ. առաջինը կեղծաւորութիւնն է, որ նոյնիսկ Աստծուն է ցանկանում խաբել, որ կապարն արծաթի տեղ է ցանկանում ծախել եւ պղինձը՝ ոսկու: Երկրորդը, երբ ողորմութիւն չէք անում,

որի մասին Քրիստոս դատաստանին ասելու է՝ «Անիծեալնե՛ր, գնացէ՛ք ինձնից յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի եւ իր հրեշտակների համար. որովհետեւ քաղցած էի, եւ ինձ ուտելիք չտուիք, ծարաւ էի եւ ինձ ջուր չտուիք» (Մտթ. ԻԵ.42)։ Երրորդ գլխաւոր մեղքը գայթակղութիւնն է՝ «Վա՛յ որ կգայթակղեցնի»։

Գայթակղեցնողներից առաջինը Սադայելը եղաւ, որ իր կողմը քաշեց աստեղային հրեշտակների մէկ երրորդ մասին։ Նա գայթակղութիւն գցեց Աստծոյ եւ մեր առաջին ծնողների միջեւ (Ադամ եւ Եւա)։ Երկրորդը Եւան եղաւ, որ մոլորեցրեց Ադամին։ Երրորդը Ռուբէնը եղաւ՝ Յակոբի առաջնեկը, որ շնացաւ Յակոբի հարճի հետ։ Չորրորդը Դաւիթը եղաւ, որ ցանկացաւ Բերսաբէին, շնացաւ նրա հետ եւ սպանեց նրա ամուսնուն՝ Ուրիային։ Հինգերորդը եղաւ Նաբադի որդի Ռոբովամը, որ վերցրեց ոսկեղէն երինջները եւ Իսրայէլին մոլորեցրեց կռապաշտութեամբ։ Վեցերորդը Մանասէն էր, որ իր անպատմելի խայտառակութեամբ աւելի չար գտնուեց, քան միւս բոլոր թագաւորները՝ իր որդուն հրի միջով անցկացնելով, գայթակղուելով եւ թռչունների միջոցով գուշակութիւններ անելով (տե՛ս Դ Թագ. ԻԱ)։

Իսկ նոր օրէնքում գլխաւոր գայթակղեցնողը եղաւ Փոկասը[20], որ թագուհու յորդորով սպանեց

---

[20] Փոկաս – Բիւզանդիայի կայսր 602-610 թթ.։ Իշխանութեան է անցել՝ Մորիկ կայսերը գահընկեց անելով։

Մորիկին[21], ընդ որում պղծութեամբ ամուսնացաւ թագուհու հետ: Իսկ պարսից թագաւորը Մորիկի արեան վրէժից մոլեգնած՝ գրաւեց Երուսաղեմը, Սուրբ Խաչը տարաւ Թաւրիզ եւ արեան գետեր բխեցրեց յոյների ողջ թագաւորութեան մէջ: Քանզի մի առաջնորդի մեղքը պատժի սկզբունքով տարածւում է նրա բոլոր ենթակաների վրայ, ինչպէս Ադամինը՝ նրա բոլոր որդիների վրայ:

Մէկ մարդով մեղքը աշխարհ մտաւ, մեղքից էլ՝ մահը, որովհետեւ Ադամով ամենքս մահկանացու դարձանք: Մի վատաբարոյ տանուտէր վարկաբեկում է ամբողջ ընտանիքը: Մի մոլորուած հովիւ ամբողջ հօտն է մոլորեցնում: Մի տգէտ նաւավար ամբողջ նաւն է խորտակում:

Այսպիսով՝ ամե՛նքը պէտք է զգոյշ լինեն եւ չտրուեն գայթակղութեանը, ապա թէ ոչ՝ բոլոր գայթակղուածները նոյնպէս պատիժ կստանան:

---

[21] Մորիկ – Բիւզանդիայի կայսր 539 – 602 թթ.:

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԵՐՋԱՆԻԿ ՀԱՄԱՐՈՒԵԼ, ԵՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՔԱՆԻ՞ ՏԵՍԱԿ ԿԱՅ

Աշխարհիկ կեանքում նա է համարւում երջանիկ մարդ, որ իր հաճոյքների համար ունի ամէն ինչ՝ որքան կամենայ: Բայց ըստ Սուրբ Գրքի այդպիսի մէկը թշուառական է, ամէն ինչ ունի իր հաճոյքների համար, բայց չունի Աստծուն, որից բխում են ամէն բարութիւն ու մեծ երջանկութիւն: Դաւիթ մարգարէն ասում է. «Երանի՛ այն ժողովրդին, ում հետ է Տէր Աստուած» (Սաղմ. ՃԽԳ.15) եւ թէ՝ «Ովքեր պարծենում են, թող Տիրոջով պարծենան, գիտութեան խորհուրդներում Տիրոջը ճանաչեն», եւ սա՛ է յաւիտենական կեանքը, քանզի «Քեզ են որպէս միակ ճշմարիտ Աստուած ճանաչում» (Ա Թագ. Բ.9):

Դրախտում Ադամը երջանիկ չեղաւ: Ադամին արգելուեց ուտել գիտութեան ծառից, եւ այդ պատճառով նա կատարեալ երջանիկ չէր, քանզի իր ցանկութեան իրագործման պակասն ունէր, որ էր՝ արգելուած բարու եւ չարի պտղի ճաշակումը: Նաեւ երջանիկ չեն նրանք, որ գտնւում են մահուան եւ կեանքի միջասահմանին, եւ այդպիսին էին մարդկային ցեղի առաջին ծնողները դրախտում:

Երջանկութիւնը բոլոր բարիքների երանութիւնն ու խնդութիւնն է, կամ բոլոր բարիքների ներկայութիւնը եւ բոլոր չարիքների բացակայութիւնը:

Ըստ Պլատոնի՝ երջանկութիւնը լինում է հինգ տեսակի: Առաջինն այն է, երբ հասնում են այն աստիճանի կրթութեան, որ կարողանում են փորձառութեամբ խրատել ուրիշներին: Երկրորդ՝ երբ ունեն ներդաշնակութիւնը մարմնի եւ զգայութիւնների: Երրորդ՝ երբ խոհեմ են. մինչեւ գործելը պէտք է անելիքի մասին յստակ խորհել, ինչպէս վայել է քաջ ու խոհեմ մարդուն: Չորրորդ՝ երբ բարի համբաւ եւ անուն ունեն: Հինգերորդ՝ երբ հարուստ են այնքան, որ կարողանում են օգնել բարեկամներին:

Ըստ առաջինի՝ իմաստուններն իրենց մտքով եւ ուսուցիչները փորձառութեամբ յիրաւի երջանիկ են, որովհետեւ երանելի են Աստծոյ եւ էակների մասին խոկալով եւ գործնական առաքինութեան փորձառութեամբ, քանզի թռչում են երկու թեւերով՝ թէ՛ լսում եւ թէ՛ խոկում են աստուածայինն ըստ Մարիամի եւ պատրաստում են հոգեւոր կերակուր ըստ Մարթայի:

Երջանկութեան երկրորդ տեսակի մասին պէտք է ասել, որ զգայութիւններով առողջ մարդն այն պատճառով է երջանիկ կոչւում, որ չունի բնական պակասութիւններ եւ կարողանում է ամէն բան քննել ու իմանալ: Այսպէս, ըստ Պլատոնի՝ Արարիչը տեսողութիւն եւ լսողութիւն է շնորհել

մեզ, որպէսզի դրանց միջոցով իմաստասիրութեան ուղիով ընթանանք: Երբ հարցրին Դիոգենէսին[22], թէ ինչի՞ համար է աշխարհ եկել, նա ասաց՝ արեգակը, լուսինը եւ աստղերը տեսնելու համար: Իսկ Թալէսը երջանկութեան մասին ասել է. նա է երջանիկ, ով մարմնով առողջ է, բազկով ուժեղ եւ հոգով բարեկիրթ:

Ըստ երրորդի՝ երջանիկ է խոհեմը, որ ինչ անում է՝ խոհեմաբար է անում եւ այդպէս տարբերւում է անբաններից, քանզի անցեալը չի մոռանում, ներկան տնօրինում է բարուօք կերպով, գալիքից զգուշանում է կամ նախապէս հոգում է դրա մասին: Ովքեր ներկան ի բարին չեն տնօրինում, այլ միայն գալիքի համար են մտահոգւում, կարծես այնպէս են վարւում, որ ինչ ունեն, կորցնում են, եւ հոգ են տանում նրա մասին, ինչ որ չունեն: Սրանց համար է ասում Յակոբոս առաքեալը. «Չգիտէք վաղը ձեր կեանքը ինչպէս կլինի, քանզի իբրեւ մշուշ էք» (Հակ. Գ. 13):

Ըստ չորրորդի՝ երջանիկ է բարի համբաւ եւ անուն ունեցող մարդը, որ մտքով ճշմարիտն է խորհում (որ բարեկրթութիւնն է), իսկ բերանով մտքին համարժէք ճշմարիտն ու օգտակարն է խօսում: Այսպիսի մարդը նման է քաղցրաբար հնչող ներդաշնակ քնարի, նաեւ նման է անուշա-

---

[22] Դիոգենէս Սինոպացի (Ք.ա. 404 - 323 թթ.) – հին յոյն փիլիսոփայ: Երբ մի անգամ ցերեկով շրջում էր ճրագը ձեռքին, նրան հարցրին, թէ ինչ է անում, նա պատասխանեց. «Մարդ եմ որոնում»:

հոտ իւղի, որ թէպէտ մարմինը չի սնուցում, սակայն ուղեղն է զուարթացնում. իւղը զուարթացնում է այնպէս, ինչպէս որ բարեհամբաւ մարդը թէ՛ իրեն է օգուտ բերում եւ թէ՛ ուրիշներին է զուարթացնում: Ամենքս անուշահոտութիւն ենք Աստծոյ համար, սակայն ոմանք դէպի մահ, իսկ ոմանք՝ դէպի կեանք են ընթանում: Ճիշտ այնպէս, ինչպէս անուշահոտութիւնը տհաճ է խոզերի ու օձերի համար, բայց հաճելի՝ առողջ ճաշակի տէր մարդու համար:

Ըստ հինգերորդի՝ երջանիկ է ունեցուածքով լիացածը, բայց պայմանով, որ միայն բաշխի՝ նման այն շտեմարանին, որ բացւում ու կերակուր է բաշխում սովի ժամանակ: Սակայն եթէ հարստութիւնը միայն իրեն է օգուտ բերում, նման է լոյս չունեցող արեւի, փակուած եւ չզովացնող աղբիւրի: Ով շատ ունի եւ իրեն երջանիկ է կարծում առանց բաշխելու, նման է թագաւորական երկաթեայ սնդուկի, որ փքւում է միայն ոսկի եւ արծաթ պահելու համար:

Իսկ քրիստոնէական երջանկութան հիմքը հաւատքն է, բարի ու առաքինի գործերն այս կեանքում եւ փառքը՝ հանդերձեալում: Ինչպէս որ Թուլիոս փիլիսոփան է ասում՝ **այն եմ միայն ճշմարիտ ու բարի համարում, որն ուղղորդւում է առաքինութեամբ**, իսկ մտքի նրբահայեցողութիւնը, արուեստի ճարտարութիւնը կամ բարեկրթութիւնը առաքինութեան ու մոլութեան գործիքներն են:

Բայց այն առաքինութիւնն է ճշմարտապէս բարի, եւ այն առաքինին է իրապէս առողջ, որն իր ունեցուածքը երկնքում է ամբարում: Ճշմարիտ վաճառականը նա է, որ լաւագոյն մարգարիտն է որոնում եւ գնում. նա երկնքի՛ ուխտաւոր է, մտքում պահում է իր ուխտած տեղը մտնելը, իսկ մնացեալ ամէն ինչից հրաժարւում է, ինչպէս Տէրն է առաքինիների մասին ասում. «եւ ես ուխտում եմ ձեզ արքայութիւնը» (Ղուկ. ԻԲ.29):

Առաքինութիւնը յաւիտենական կեանքի գրաւականն ու յոյսն է, քանզի ինչպէս մէկը յոյսով փոխ է վերցնում, այդպէս առաքինութեամբ է մարդը Աստծոյ արքայութիւնը փոխ ստանում:

Առաքինութիւնը երկինք տանող սանդուղք է: Նրանով առաքինին երկինք է բարձրանում եւ այնտեղ ճշմարտապէս երջանկանում՝ յաւիտենապէս վայելելով բոլոր բաղձանքների լրութիւնը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԷ ԱՅՐ ՈՒ ԿԻՆ ԻՆՉ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ

Շատերը, չգիտակցելով ամուսնութեան ծանրութիւնը, նրա իմաստը սոսկ վաւաշոտ սէրն են համարում, որի պատճառով էլ ուշադրութիւն չեն դարձնում, թէ ապագայ կինը ինչպիսին պէտք է լինի, իսկ յետոյ անյաշտ թշնամու պէս վէճ ու կռուի են բռնւում: Դրա համար աղջկայ կողմը նախ պէտք է քննի եւ իմանայ, թէ ինչ տղամարդու է տալիս աղջկան, քանզի փեսացուն պիտի ունենայ հետեւեալ յատկանիշները. պէտք է հանգիստ խօսի, չափաւոր լինի վարքի մէջ, հաւատարիմ եւ վստահելի՝ ունեցուածքը պահպանելու եւ յատկապէս կնոջից գաղտնիք թաքցնելու հարցերում, պէտք է կարողանայ հոգալ տան մասին, ընտանիքի կարիքները ժրաջան կառավարի, ծոյլ ու քնկոտ չլինի, համբերատար լինի կնոջ թերութիւնների նկատմամբ, զաւակներին քաղաքավարութեամբ ու երկիւղածութեամբ կրթի, իր կնոջ պատիւը պահելու հարցում լինի զգօն:

Իսկ աղջիկն էլ պիտի ունենայ հետեւեալ յատկանիշները. հանդարտ քայլի, տնից յաճախակի դուրս չգայ, դուրս գալու դէպքում էլ՝ ամուսնու հրամանով, ուշիմ եւ խելացի լինի կենցաղի հարցերը տնօրինելիս, ինչպիսիք են՝ սրբելը, աւելը, լուացք անելը: Եթէ նոյնիսկ ամուսինն աղախին-

ներ պահելով կարողանայ նրան ազատել այդ-պիսի հոգսերից, միեւնոյն է՝ ամօթ բան չէ այդ ամէնն իմանալ, որպէսզի կարողանայ կարգ ու կանոնով հրամայի նրանց: Ու նաեւ համբերա-տար պէտք է տանի ամուսնու թերութիւններն ու թուլութիւնները, ամուսնու հետ սիրով լինի զա-ւակների սնուցման հարցում, քաղցրախօս՝ դրա-ցիների հետ, ուշադիր լինի տան ունեցուածքը պահպանելու գործում, ամուսնու հարստութիւնը ազգականներին չտայ, մարդաւարի պատուի իր ամուսնուն, բացի ամուսնուց ոչ մէկին իրեն սի-րելի եւ բարեկամ չհամարի: Կինը պէտք է սիրի բարեպաշտութիւնը, աղօթքը եւ լինի ուրիշներին կարեկից, ծակաչք չլինի, այլ սակաւապետ, որ-պէսզի ծանր բեռ չդառնայ ամուսնու համար: Նա պէտք է աշխատասէր լինի, չտարուի հարսանիքի ժամանակ եւ դրանից յետոյ պատահող դատարկ բաներով:

Չկայ ամուսնութիւն, որ սկզբում հաճելի չլինի շաքարի պէս, յետոյ մեղրի, ապա հետզհետէ (այդ-պէս են ասում ամուսնացածները) չդառնայ դո-շաբի պէս, ապա՝ ինչպէս քացախը: Չգիտեմ, թէ իրո՞ք այսպէս է, թէ՞ մեզ մխիթարելու համար են ասում: Գուցէ կեանքի փորձառութիւ՞նն է դրան բերում: Ամէն դէպքում ես Աստծուց խնդրում եմ, որ իրար հետ մեղր ու շաքարի նման անուշ մնան: Երբ տան անհրաժեշտ բաները սկսեն պակասել,

տե՛ս թէ ինչ վէճ ու կռիւ կսկսի: Աստուա՛ծ թող հոգ տանի...

Բայց վա՛յ եւ էլի վա՛յ բարի եւ աղքատ մարդուն, որ կընկնի լեզուանի ու ամբարտաւան կնոջ ձեռքը. միակ ճարը համբերելն է: Իսկ եթէ կինը լինի բարի, սակայն աղքատ, զզո՛յշ եղիր, ո՛վ մարդ՝ յանկարծ յուսակտուր չանես նրա աղքատութիւնն ու ազգատոհմը: Եթէ գեղեցիկ է, չորս աչք պէտք է ունենաս եւ խոհեմաբար նրան կառավարես: Իսկ եթէ գեղեցիկ տեսք չունենայ, համարի՛ր, որ գեղեցիկների հարցն էլ բարդ է եւ դրանով քեզ մխիթարի՛ր: Իմացի՛ր նաեւ, որ կնոջդ վաւաշոտ կարիքների նպատակով չես առել, այլ՝ զաւակներ ծնելու: Մի՛ թող կինդ տնից դուրս գայ, բացի Աստծուն պաշտամունք կատարելու առիթներից, որպէսզի երիտասարդների հայեացքների նետերով չխոցոտուի:

Արու զաւակները չպէտք է առանց ծնողների հրամանի ամուսնանան: Պլիտարքոս փիլիսոփան պատմում է, թէ Յունաստանում ով առանց հօր հրամանի ամուսնանում էր, հրապարակաւ անարգանքի էր արժանանում: Օրինակ՝ լակեդեմոնացիները[23] նման զաւակին զրկում էին հայրական ժառանգութիւնից եւ անէծքներով նզովում, որ-

[23] Խօսքը սպարտացիների մասին է, Սպարտան անուանւում էր նաեւ Լակեդեմոն, նախապէս եղել է քաղաքպետութիւն Պելոպոնէսում:

պէսզի զաւակը մտածի բարեգոյն լինելու մասին, ծնողների օրհնութեանն արժանի գործ կատարի:

Իսկ աղջիկը, որ գիտի իրեն լաւ պահել եւ ուզում է առաւել լաւը լինել, պէտք է լեզուն զուսպ պահի, կողպէք եւ բանալի դնի բերանին եւ շատախօս քոռ պառաւի չնմանուի: Երբեւէ որեւէ մէկին կինն ինքն իրեն թող չներկայացնի՝ ազգական լինի, թէ խնամի, ո՛չ տեգորը եւ ո՛չ մէկ ուրիշի՝ բացի ամուսնուց եւ իր ծնողներից:

Աշխարհում չկայ այնպիսի մի զօրութիւն՝ ո՛չ իմաստութիւնը, ո՛չ համբերութիւնը, ո՛չ զգօնութիւնը եւ ոչ այլ ինչ, որ կարողանայ չար կնոջը բարի կամ բարի կնոջը չար դարձնել: Թէեւ պէտք է ասել, որ բարուն միշտ էլ մարդիկ սիրում են մտքով եւ ոչ թէ ասել-խօսելով:

ՏՂԱՄԱՐԴՈՒՆ ԵՒ ԿՆՈՋԸ՝ ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԻՐԱՐ ՍԻՐԵՆ

Աստուած կնոջը Ադամի գլխից չստեղծեց, որ նրան չտիրի, եւ ոչ էլ ոտքից, որ նրան աղախին դառնայ, այլ կողոսկրից ստեղծեց, որ մօտ է սրտին, որպէսզի սրտակից լինի եւ սրտանց սիրի նրան: Այսպէս էլ Քրիստոս խաչի վրայ իր կողը բացել տուեց, որպէսզի ցոյց տայ, թէ որքան է սիրում եկեղեցին: Եւ Քրիստոս չխնայեց իր մարմինը, այլ տուեց այն պատառողներին, սակայն չթողեց պատառոտեն անկար պատմուճանը, որ եկեղեցու խորհրդանիշն էր:

Եւ դու էլ, ո՛վ մարդ, կնոջդ հանդէպ սէր ունեցիր ոչ այնքան նրա եւ քո, որքան՝ Քրիստոսի համար, քանզի ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մահուան մատնեց նրա համար, դու էլ այդպէս պէտք է սիրես քո կնոջը:

Իսկ դու, ո՛վ կին, ոչ թէ վախեցի՛ր ամուսնուցդ աղախնու նման, այլ նրա անունը պահիր այնպէս, ինչպէս աչքիդ բիբն ես պահում փոշու հատիկից: Դարձեալ, ո՛վ տղամարդ, ինչպէս սիրում ես բարեբեր արտը եւ առատ բերքի համար հանդուրժում ես փուշը, նմանապէս հանդուրժող եղիր եւ աննշան խնդիրների պատճառով կնոջդ մի՛ ատիր, որ որդեծնութեան եւ շատ այլ օգուտների աղբիւր է քեզ համար:

Բարոյական հարցերի փիլիսոփայ Սոկրատէսի կին Քսանթիփան շատ լեզուանի էր: Ալկիպիադ անունով բարեկամներից մէկը, որ սագ էր պահում, ասաց Սոկրատէսին, թէ՝ «Քսանթիփայի ցոփութիւնը անտանելի է», իսկ Սոկրատէսը պատասխանեց եւ ասաց. «Ես վարժուել եմ նրա խօսակցութեան ձայնը լսելուն: Աւելի լաւ է դու ասա, թէ ղազերիդ կոկոռոցին ինչպէս ես դիմանում»: Սա պատասխանեց. «Նրանք ինձ համար ձու են ածում եւ ճտեր հանում», իսկ Սոկրատն ասաց. «Քսանթիփան էլ որդիներ է ծնում»:

Թէպէտեւ տղամարդու՝ կնոջը սիրելու առաջին պատճառը զաւակ ունենալն է, բայց եւ առանց դրա էլ տղամարդիկ պէտք է սիրեն իրենց կանանց այնպէս, ինչպէս Աբրահամը սիրեց ամուլ Սառային, ու թէպէտ նրա աղախին Ագարը որդի ծնեց եւ հպարտութիւնից իր մէջ ուռեց, բայց Աբրահամը Սառային երեսով չտուեց թէ՝ «ինքդ դրա առիթը տուեցիր», այլ որպէսզի նրան չտրտմեցնի՝ աղախնուն յանձնեց Սառային, իսկ վերջինս վտարեց նրան: Նմանապէս եւ Սամուելի մայր Աննան սկզբում ամուլ էր, սակայն ամուսինը՝ Եղկանան նրան առաւել էր սիրում, քան իր միւս կնոջը՝ որդիներ ծնած Փեննանային: Աննայի տրտմութեան պահին ահա թէ ինչ զրոյց տեղի ունեցաւ.

Եղկանան ասաց.

-Աննա՛:

-Այստեղ եմ, Տէ՛ր իմ:

-Ինչո՞ւ ես լալիս, ինչո՞ւ չես ուտում, եւ ինչո՞ւ է հոգիդ ալեկոծւում, մի՞թե ես քեզ համար տասը որդուց լաւը չեմ (Ա. Թագ. 1-8):

Տղամարդը կնոջը պէտք է սիրի իր անձի պէս, ճիշտ այնպէս, ինչպէս որ մարդը դարմանում եւ սնուցում է իր մարմինը, իսկ անդամներից մէկի տկարանալու դէպքում խնամում այն, եւ եթէ գլուխն է ցաւում, չի կտրում այն, եթէ աչքն է ցաւում՝ չի հանում դեն նետում, այլ դարմանում է: Նոյն ձեւով տղամարդը պէտք է կնոջն այնպէս սիրի, որ կարողանայ նրա պակասութիւնները տղամարդու պէս տանել, եւ ոչ թէ տեղի-անտեղի կշտամբի, որպէսզի կնոջ մտքով չանցնի, թէ ամուսինն ուրիշին է սիրում:

Ոսկեբերանն իր Ի. ճառում ասում է. «Թող ոչ ոք կնոջը չզրպարտի, կնոջ ու ամուսնու միջեւ վէճ չառաջացնի: Նաեւ՝ տղամարդն իր կնոջ հասցէին ասուած անտեղի չարախօսութիւններին թող չհաւատայ, իսկ կինն էլ ամուսնու գալն ու գնալը չհսկի, բայց եւ տղամարդն էլ իր կնոջ մօտ կասկած թող չյարուցի»:

Ողջ օրը բարեկամներիդ հետ ես անցկացնում, դա բաւական չէ, նոյնիսկ երեկո՞ն չես ուզում կնոջդ ուշ դարձնել եւ կասկածի առիթ չտալ յոռութեան մէջ: Իսկ եթէ կինը մեղադրում է քեզ, մի՛ խոժոռուիր, քանզի դա գալիս է ոչ թէ չարախօսութիւնից, այլ սիրուց, երկիւղից ու կասկածներից, քանի որ կինդ երկիւղ է կրում, թէ գուցէ որեւէ մէկը ամուս-

նութեան պարկեշտ մահիճը խլի եւ իրեն գլխիկոր թողնի: Կասկածանքի այլ պատճառներ էլ կան, օրինակ կնոջ համար՝ չլինի՞ թէ տղամարդը մի այլ աղջկայ հաւանի, ամուսնու համար՝ չլինի՞ կինն իրեն ընտելացած ծառային հաւանի: Այդ դէպքում պսակի խորհրդին հաւատարիմ մնալու համար տղամարդն այդ աղջկան, իսկ կինը՝ ծառային պարտաւոր են արտաքսել: Աբրահամը կամեցաւ անզաւակ մնալ երկար ժամանակ եւ չմերձեցաւ Ագարին, որպէսզի կնոջը չտրտմեցնի, մինչեւ որ Սառան ի՛նքը աղախնուն նրա ծոցը մտցրեց եւ յետոյ ինքն էլ նրանից գանգատուեց: Իսկ Աբրահամը աղախնուն մատնեց Սառայի ձեռքը, որպէսզի կնոջը չտրտմեցնի:

Սիրոյ եւ միաբանութեան աւելի կարեւոր նշան չկայ, քան կնոջ եւ տղամարդու միջեւ միակամութիւնն է: Թող որեւէ տղամարդ կամ կին աղքատութեան պատճառով միմեանց չնախատեն: Ո՛չ թէ ունեցուածքի թող ձգտեն, այլ՝ սիրոյ: Կինը տղամարդուն թող չասի՝ «ապաշնո՛րհ ես, ծոյլ եւ քնկոտ», կամ չասի՝ «տղամարդ չես, մարդ չես»: Նման դէպքում ամուսինը կթողնի օտար աշխարհներ կգնայ, այնտեղ կհարստանայ, սպիտակ նժոյգներ ու կառք կվարի, իսկ դու քո կեանքը անտեղի կվատնես: Թող կինը նման բաներ չասի, տղամարդուն հրամաններ չտայ, այլ միայն խոնարհ եւ հնազանդ լինի նրան: Իսկ տղամարդն էլ նման խօսքեր լսելիս թող չշտապի հարուածներ տե-

ղալ, այլ այն դիտի իբրեւ թեթեւամտութիւն, փորձի համոզելով հարթել, խնամի նրան որպէս նուրբ աչք եւ ոչ թէ ձեռքը բարձրացնի հարուածելու համար: Թող կնոջը սովորեցնի, որ աղքատութիւնը չարիք չէ, որ փառքը եւ անբարոյ զգեստների ցուցամոլութիւնը պէտք է արհամարհել: Թող սովորեցնի նաեւ, որ **խոնարհութիւնից անմահութեան հոտ է բուրում**, իսկ զարդերից եւ աչքերին ծարիր քսելուց՝ ուրիշներին հաճոյանալու ցանկութիւն: Ու դարձեալ՝ հարսանիքից առաջ կինը կարող է լաւ կարծիք սերմանել ամուսնու մասին, ասելով, թէ՝ «Իմ ամուսինը պարկեշտութիւն սիրող է, քանի որ գուսանական երգիչներ ու տղաների խմբեր չբերեց եւ ոչ էլ պարուհիներ, ուրեմն ես է՛լ աւելի պարկեշտ պիտի դառնամ, քանզի պիտի սիրուեմ նրա կողմից», նաեւ ասելով՝ «Ուրեմն լաւ ամուսնու եմ հանդիպել: Ահա տեսե՛ք, թէ ինչպիսին է իմ ամուսինը. իմաստուն, խոնարհ, զգօն, աշխարհի փառքը ոչինչ է համարում՝ մտածելով միայն որդի ունենալու եւ մեծացնելու մասին»:

Երբ ամուսնուն հէնց սկզբից այսպէս գնահատի, վերջինս ինչպէ՞ս կվարուի. չեմ հաւատում, թէ այս ամէնը տեսնելով՝ ամուսնու բերանից որեւէ վատ խօսք դուրս գայ կամ յոռի բան անի: Այդ դէպքում եթէ աղջիկն անգամ անամօթի մէկը լինի, հնարաւոր չէ, որ ամուսնու ազնիւ վարքը տեսնելով ակնածանք չզգայ, իսկ եթէ ամօթխած լինի, մարդիկ էլ նրա ամօթխածութիւնը կգովեն

ու կյորդորեն միշտ այդպիսին մնալ, քանի դեռ «սանձը բերանին է» եւ «քողը՝ երեսին»: Բայց եթէ ամօթը սկզբից եւեթ բացակայի, յետոյ ամէնը կեղծանուի:

Հէնց սկզբից քիչ խօսիր, իսկ վայրենաբար յոխորտալուց կամ վէրքերը շանթելուց յետոյ դրանց վրայ անուշ սպեղանի դիր, խոնարհութեամբ խրատիր: Իսկ եթէ մի անգամ երես տաս, շատ անգամ կփոշմանես: Աքաաբի մասին Սուրբ Գիրքն ասում է՝ «Իզուր ամբարտաւանացաւ Աքաաբը՝ չարիք գործելով Տիրոջ առջեւ: Նրան իր կինը՝ Հեզաբելը յիմարեցրեց» (Գ Թագ. ԻԱ.25):

Անտոնիոս զօրավարը, Եգիպտոսի Կլեոպատրա թագուհու սիրուց դրդուած, կորցրեց իր կայսրութիւնը՝ պարտութիւն կրելով Օգոստոս կայսեր կողմից: Սրանց նմանների համար Ոսկեբերանն ասում է. «Ո՛վ աղջիկ, կեանքի կցորդ, մահը մեծարողը եղար»:

Քեզ տուն բերեցինք բոլոր բարիքներին եւ կարիքներին հաղորդակից լինելու, որդի ծնելու, տնարար լինելու համար, մի՞թէ սա էինք ցանկանում: Ճանաչիր,- ասում է,- քո սէրը նրա նկատմամբ. շատ ազնուական աղջիկներ փորձեց առնել, բայց քո համեստութիւնը, հեզութիւնը եւ իմաստութիւնն ընտրեց: Հէնց այնպէս չի, որ ընչասէր կին չցանկացաւ, քանի որ գիտէր, որ աւազակների ու պոռնիկների նման կարող է լինել: Բայց քո համեստութիւնը ցանկացաւ, քանզի

իմաստուն եւ հեզաբարոյ, երկիւղած եւ խոնարհ կինը աշխարհ արժէ, նրան ամէն պատուական բանից առաւել պէտք է համարել, անգամ՝ որդիներից: Եթէ բարի բան կատարի՝ գովիր, իսկ եթէ մի յոռի բան՝ խրատի՛ր, ունեցուածքը եւ զարդերը նրա առաջ պարսաւիր, հասկացրո՛ւ նրան, որ պատուական զարդը պարկեշտութիւնն է:

Երբ ամուսինն ու կինը եկեղեցի են գնում, յետոյ տանը հարցուփորձ անելով թող սովորեն իրարից: Եթէ աղքատութիւն պատահի, Պետրոսին եւ Պօղոսին որպէս օրինակ թող բերեն, որոնք թագաւորներից առաւել առաքինի գտնուեցին. այսպիսի խրատներ լսելուց յետոյ վանականներից ոչնչով պակաս չեն լինի: **Երբ սեղան գցեն, հարուստներին ու հպարտներին թող չկանչեն, այլ աղքատներին եւ սուրբերին, ովքեր Աստծոյ օրհնութիւնը ոտքի փոշու հետ տուն կբերեն:**

Թող ոչ ոք չցանկանայ ընչասէր կնոջ տուն բերել, այլ՝ աղքատագոյնին, քանզի ունեցուածքից աւելի շատ տրտմութիւն, քան ուրախութիւն է ծնւում, զարդերի շուքից՝ թշնամանք, ամբարիշտ խօսքից՝ սրտի կսկիծ, ինչպէս որ այն դէպքում, երբ կինն ասում է՝ «Քո ունեցուածքից դեռ ոչինչ չեմ ծախսել, այլ իմ հօր ունեցուածքով եմ ապրում»: Ինչպիսի՛ ամբարտաւան խօսք:

Ի՞նչ ես խօսում, ո՛վ կին, մարմինդ չես խնայում, փոխարէնը ունեցուա՞ծքդ ես խնայում. դու եւ ամուսինդ մէկ մարմին եղաք, այդքանից յետոյ

«իմ ու քո՞» ես անում: Որդիներն ընդհանուր են, պէտք է ընդհանուր լինեն նաեւ արեւը, ջուրը, լոյսը եւ ունեցուածքը: Կամքը նոյնպէս պէտք է մէկը լինի: Ջանա՛ մտքիցդ հանել «իմն ու քոնը», ինչպէս որ մանուկներին ենք ձեռքերում պահած ասում՝ «Քո որդին է»:

Կանայք մանուկներից թեթեւամիտ են. երբ կինդ ասում է «իմն է», դու ասա՝ «ամե՛ն ինչն է քոնը, ես էլ եմ քոնը»: Կնոջդ անունով մի՛ դիմիր, այլ կոչիր այնպէս, ինչպէս Ադամը, որ Եւային բոլոր կենդանիների մայր կոչեց, եւ կամ Աբրահամը, որ իր կնոջը տիրուհի էր անուանում: **Կնոջդ Աստծոյ երկիւղը սովորեցրու, եւ բարիքները կյորդեն աղբիւրի պէս եւ կլցնեն ամբողջ տունդ**: Այդ դէպքում քո կինը մի վայելուչ այգի կլինի քո տանը, իսկ զաւակներդ՝ իբրեւ ձիթենիներ քո սեղանի շուրջը, եւ տեսնողները կասեն՝ «Երանի՛ սրանց, քանզի Տիրոջ բաժինն են, եւ սրանց ճշմարիտ տէրը նոյն ճմարիտ Աստուածն է»:

ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆԸ ԲՈԼՈՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՁԱՐԴԱՐԱՆՔՆ ՈՒ ՓԱՌՔՆ Է

Առաքեալը պատուիրում է բոլոր հաւատացեալներին, որ հեթանոսների առջեւ պարկեշտ վարք դրսեւորեն: Որովհետեւ **պարկեշտութիւնը մարդու կեանքի վայելչութիւնն ու կատարելութիւնն է**:

Արդ՝ պարկեշտ մտքերին առաջնորդում են համեստ աչքերը, որովհետեւ աչքն իր նրբութեան շնորհիւ աւելի մօտ է աննիւթ մտքին, որի համար էլ խորհուրդներն ու ցանկութիւնները հեշտութեամբ են հոգուց անցնում աչքերին, աչքերից էլ՝ մտքին: Այսպիսին էր այն կինը, որ պոռնկական կերպարանքով ընդառաջ էր ելնում երիտասարդներին եւ խելքահան անում նրանց (Առակաց, Է. 10): Դանիէլն ասաց ծեր դատաւորին. «Շուշանի գեղեցկութիւնը գրաւել է քեզ, եւ ցանկութիւնը տակնուվրայ է արել սիրտդ»: **Աչքը սրտի սենեակի առաջին դուռն է, որով մարդու հոգին են մտնում ինչպէս բարեկամները, այնպէս էլ թշնամիները**:

Համեստ են ականջները, երբ խուսափում են բոլոր աղտեղի ու վաւաշոտ զրոյցներից, խորշում անվայել խօսակցութիւններ լսելուց: Ականջները պէտք է ցանկապատել փշերով՝ հրաժարուելով

աղտեղութիւններ լսելուց, որպէսզի խոցոտուի այդ մասին խօսողի սիրտը:

Համեստ է բերանը, երբ չի արտաբերում գայթակղեցնող խօսքեր, որպէսզի լսողների կործանման առիթ չդառնայ: Որեւէ տգեղ խօսք ձեր բերանից թող չելնի:

Համեստ են ռունգերը, երբ չեն իգանում հեշտալի իւղերով եւ անուշահոտ կերակուրներով: Իսկ շօշափելիքները համեստ են, երբ չեն դիպչում անպատեհ բաների ու չեն շօշափում դրանք, այլ երկնչում են բոլոր գարշելի բաներից եւ փախչում են անվայելուչ գործերից:

Արդ, այս արտաքին համեստութիւնները ծնւում են մտքից, երբ միտքը հնազանդւում է բանականութեանը: Ներքին զգայութիւնների անբարեկարգ վիճակից իրար են խառնւում նաեւ արտաքինները: Այսպէս օրինակ՝ մտքի ցասման ժամանակ խոժոռւում եւ այլագունում է դէմքը, աչքերը հուր են ցոլացնում, բերանը դատարկ մեծախօսում է եւ գոչում, իսկ ձեռքը առաջ է գնում, որ հարուածի: Նոյն ախտն են կրում նաեւ արտաքին զգայարանները ներքին զգայութիւնների անկարգ վիճակից: Որովհետեւ բերանը կամքի հրամանով է աղտեղի բաներ խօսում, իսկ աչքերը՝ արատաւոր երեւոյթներին նայում:

Ժամանակով երկու դատաւոր՝ Փենտէ եւ Սոփոտէ անուններով, նստած էին ատեանում: Երբ նրանց առջեւից մի վայելուչ երիտասարդ ան-

ցաւ, Սոփոտէն ասաց ընկերոջը. «Նայի՛ր այս գեղեցիկ երիտասարդին»: Փենտէն պատասխանեց. «Վայել է, որ դատաւորը համեստ լինի ոչ միայն գործով, այլեւ հայեացքով»: Սրա մասին Թուլիոսն ասում է. «Եթէ Սոփոտէն այսպիսի միտք արտաբերէր զինուորներ ընտրելու առիթով, յանդիմանութեան արժանի չէր լինի, իսկ դատարանում նրա ասածը պարսաւանքի է արժանի»:

Ուրեմն՝ համեստ, պարկեշտ եւ բարոյական մարդը պէտք է հեռու մնայ բոլոր անվայելուչ ու աղտեղի բաներից թէ՛ ծիծաղելիս, թէ՛ շարժուելիս ու հագնուելիս, պէտք է հեռու պահի իրեն անպատեհ գործերից:

Սենեկան ասում է. «Աղտեղի խօսքերից քեզ զերծ պահիր, որպէսզի անամօթութեանը չսնուցես»: Աւելի շատ օգտակար, քան ծաղրական բաներ խօսիր, աւելի պարզ՝ քան խրթնաբան: Ծաղրանքը թող սակաւ լինի քեզ մօտ, զերծ մնայ մանկամիտ հոհոռոցից եւ կանանց պէս մի՛ թուլացիր ծիծաղից:

Մի՛ ծաղրիր, մի՛ ծանակիր ու մի՛ ուրախացիր գործը ձախողած մարդու վրայ:

Մի՛ հետաքրքրուիր ուրիշներով եւ **կոպտօրէն մի՛ յանդիմանիր, այլ խրատիր առանց անարգելու:**

Ների՛ր սխալուողին: **Ոչ ոքի չափից շատ մի՛ բարձրացրու եւ ոչ ոքի վայր մի՛ զցիր:**

Հարցնողին բարեխիղճ պատասխան տուր եւ նոյն բարեխղճութեամբ էլ լսիր նախատողին: Ոչ

ոքից մի բաժանուիր արհամարհող խօսքով կամ կռուով: Սակաւախօս եղիր եւ համբերութեամբ լսի՛ր խօսողին, իսկ անկարգ խօսքերից երեսդ թեքիր: **Զուարթադէմ եղիր, երբ խօսում ես մարդկանց հետ:** Շարժուելիս ոչ դանդաղիր եւ ոչ էլ շտապիր: Ոչ վայրենու պէս հագնուիր եւ ոչ էլ պոռնկաբար պճնուիր: Հերոնիմոսն[24] ասում է, որ պէտք է խուսափել ինչպէս աղտեղի, այնպէս էլ պճնազարդ հանդերձներից, որովհետեւ մէկը հեշտասիրութիւնն է ցուցադրում, միւսը՝ կեղծաւորութիւնը:

Մարդկանց տեսքից երեւում է, թէ ով ինչ արհեստի կարող է ընդունակ լինել. հէնց այդ արհեստն էլ նա պէտք է սովորի: Դրանից ելնելով՝ մարմնով թոյլ, բայց մտքով ուշիմ եւ լաւ յիշողութիւն ունեցողը պարտաւոր չէ զինուորագրուել, այլ պէտք է ընթերցի եւ ուսում ստանայ, որովհետեւ յիմարութիւն է բնութեանը դէմ գնալ եւ անկարելի գործեր ձեռնարկել:

Երիտասարդներին վայել չէ խուսափել հոգեւոր եւ մարմնաւոր աշխատանքներից: Իսկ ծերերը ոչ թէ մարմնով պէտք է աշխատեն, այլ՝ խրատեն մարդկանց բարի խորհուրդներով:

Առաջնորդը պէտք է համեստ պահի իրեն հնազանդուողների մօտ, իսկ ենթակաները հաւասար

---

[24] Հերոնիմոս (342-419 թթ.) - աստուածաբան, Աստուածաշնչի լատիներէն կանոնիկ բնագրի կազմողը:

պէտք է վարուեն բոլոր քաղաքացիների նկատմամբ:

Համեստութիւնը բարի մարդկանց բնական յատկութիւնն է: Եւ այդ է պատճառը, որ բոլոր օրէնքներով պատժի առաջ են կանգնում անհամեստ մարդիկ, եւ դատաւորները նշանակւում են անհամեստ եւ անբարոյ արարքները սանձելու համար:

Համեստութիւնը հարսի քող է, որով ծածկւում է մարմինը: Այն փայլ է տալիս ոսկուն, աղ է, որով համեմւում է կերակուրը, զգեստ է, որ պաշտպանում է ցրտից եւ տօթից: **Համեստութիւնը լոյս է, որ ցոյց է տալիս առաքինութեան բոլոր գոյները**: Որովհետեւ առանց համեստութեան բոլոր առաքինութիւնները անզարդ են եւ նման են մարմնի, որ զուրկ է հոգուց:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵԹԷ ՄԷԿՆ ԱՆՁԱՄԲ ԿԱՐՈՂ Է ՀՈԳԱԼ ԻՐ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ, ՉՊԷՏՔ Է ԱՅՆ ԱՅԼՈՑ ԹՈՂՆԻ

Մեր այս ժամանակներում, ինչպէս երեւում է, բոլորը նմանուել են 38-ամեայ անդամալոյծին եւ ասում են Փրկչին. «Ոչ մէկը չունեմ, որ ջրերը հուզուելիս ինձ աւազանի մէջ գցի» (Յովհ. Ե.7)։ Իհարկե՝ չենք անտեսում սուրբերի աղօթքներն ու բարեխօսութիւնը, Քրիստոսի անհուն բարիքն ու Սուրբ Հոգու շնորհները (նրանք լրացնում են իրենց բաժինը)։ Նմանապէս հիւանդին դարման է պէտք բժշկի դեղատոմսի համաձայն, եթէ կամենում է բժշկուել։

Շատերն ասում են՝ «Աղօթք արա ինձ համար, Հա՛յր սուրբ»։ Բայց ի՞նչ օգուտ, եթէ ես հիւսեմ, շինեմ, իսկ դու քանդես։ Մէկն օրհնում է, իսկ միւսը՝ անիծում։ Աստուածը որի՞ն լսի։

Սուրբ Բարսեղ Կեսարացին ասում է. «Եթէ արդարը շինի աղօթքներով, իսկ մեղաւորը քանդի, գործը միշտ անկատար կմնայ»։ Ուստի մինչ Պօղոսը հեռանում էր Եփեսոսից, բնակիչներին չխնդրեց, որ միայնակ աղօթի, այլ բոլորի հետ ծունկի եկած աղօթք արեց։

Իմացա՛ծ եղիր, որ թէեւ յաղթանակը մենք ենք տանում՝ մեր կարողութեանը համապատասխան, սակայն զօրքն ու պաշարը (այսինքն՝ շնորհն ու

օգնութիւնը) Աստծուց են, եւ Նրան ենք պարտական մեր յաղթանակի համար: Աթենացիների Ալկիպիատէս զօրավարը մշտապէս յաղթող էր, քանի որ երբեւէ չէր հրամայում իր զօրքերին՝ «Գնա*գէ՛ք* եւ պատերազ*մէ՛ք*», այլ միշտ ասում էր՝ «Գն*ա՛նք*, ընկերնե՛ր եւ պատերազմ*ե՛նք*»: Նա ուրիշների համար փոքր հրաման էր արձակում, իսկ իր վրայ ծանր բեռներն էր դնում:

Յայտնի է, որ հնարաւոր չէ առանց զօրագլխի զինուորներին մարտի ուղարկել եւ յաղթանակ ապահովել: Նմանապէս եւ **հնարաւոր չէ մարմնի, աշխարհի եւ սատանայի դէմ յաղթանակ տանել միայն այլոց աղօթքներին ապաւինելով**:

Մի աբեղայ փորձութեան ենթարկուեց պոռնկական խորհրդով, ապա գնաց մի ծերունու մօտ, որպէսզի նա իր համար աղօթք անի. աղօթեց ծերունին, բայց փրկութեան հնար չեղաւ: Ապա Քրիստոս երեւաց ծերունուն եւ ասաց. «Աբեղայի ծուլութեան պատճառով է, որ քո աղօթքները լսելի չեն լինում»: Ահա եւ առակի իմաստը. ով կամենում է, ինքն է գնում, իսկ ով չի կամենում՝ ուրիշին է ուղարկում մարտի: Այդպէս էլ ով կամենում է փրկուել, պէտք է ի՛նքը ջանք գործադրի, իսկ ով չի կամենում՝ ուրիշին է յանձնում իր փրկութիւնը:

Մոգերը հեռուից հետեւեցին նորածին աստղին եւ երբ եկան Երուսաղէմ, Աստծոյ խնամքով կորցրին աստղը, որպէսզի մի աքաղաղի նման ձայն տային դպիրներին ու փարիսեցիներին, որ

ելնեն ու որոնեն Սուրբ Գրքում իրենց փնտրածը: Բայց սրանք քնկոտ շան նման իրենց գլուխները մի կերպ բարձրացրին ու հազիւ ասացին՝ Հրէաստանի Բեթղեհէմում է ծնուելու մեսիան, եւ իսկոյն թմբիրի ու քնի մէջ ընկղմուեցին:

Ինչպէ՞ս մոգերը գտան իրենց փնտրածը: Նրանք իրենց փառքը հեթանոսներին վաճառեցին (ինչպէս Յովսէփին եղբայրները վաճառեցին մադիանցիներին): Այդ մասին է վկայում Յակոբի խօսքը. «Դարձի՛ր, Յակոբ, բռնի՛ր իմաստութիւնից նրա լոյսի ծագման իսկ պահին, քո փառքը ուրիշին մի՛ տուր» (Բարուք, Դ.2): Ինչպէ՞ս է, որ տակաւին կռապաշտ մոգերին երեւում էր Քրիստոսը, իսկ աստուածապաշտ ձեւացող Հերովդէսին չէր երեւում. մոգերը եկան, եւ Հերոդէսն ասաց՝ «Գնացէ՛ք», նա չկարողացաւ գտնել, քանի որ ինքը չգնաց: Ասում են՝ «Հա՛յր սուրբ, աղօթի՛ր մեզ համար», եւ այդպէս իրենց փրկութիւնը յանձնում են այլոց:

Պետրոսը լիւդիացի ութ տարուայ անդամալոյծին բժշկելիս ի՞նչ ասաց. «Տէր Յիսուսը քեզ բժշկում է, վե՛ր կաց եւ յարդարի՛ր քո անկողինը» (Գործք, Թ.34): Յիսուս Քրիստոս, այո, բժշկում է, բայց նաեւ մեզ հրամայում է մեր մեղքերի հեշտալից անկողինը յարդարել: Հրեաները Երուսաղէմից որոշ դպիրների ուղարկում են Յովհաննէս Մկրտչի մօտ, ճշտելու՝ «Դու՞ ես մեսիան»: Այլոց ուղարկեցին եւ ոչ թէ իրենք գնացին, այդ պատճառով չգտան պատասխանը: Կարող ես ասել՝

Յովհաննէս Մկրտիչը նոյնպէս իր աշակերտների միջոցով փորձեց հարցնել Տիրոջը՝ «Դու՞ ես որ գալու ես» եւ այլն: Պատասխանեմ. Յովհաննէսը բանտում էր, այդ պատճառով ուրիշներին ուղարկեց, քանի որ ինքը չէր կարող գնալ, իսկ քահանայապետերի ոտքերը կապուած չէին, բայց իրենք չգնացին:

Այդպէս է, սիրելինե՛ր, ով կարող է՝ պէտք է անձամբ ընդառաջ գնայ բարուն, իսկ ով չի կարող անձամբ գնալ, պէտք է գնայ այլոց աղօթքներով եւ սրբերի բարեխօսութեամբ, օրինակ՝ երբ ձեզանից մէկը հիւանդանում է, կանչում էք քահանաներին, եւ աղօթք են անում հիւանդի վրայ: Իսկ եթէ սրբերի աղօթքները զօրաւոր են, այդ դէպքում ինչու՞ Սիմոն կախարդը չօգտուեց առաքեալների աղօթքներից, այլ աղերսեց առաքեալներին, թէ՝ «Ինձ համար խնդրեցէ՛ք Տիրոջը»: Պատասխանեմ. նա քեզ նման չօգտուեց առաքեալների աղօթքներից, քանի որ «ինձ համար խնդրէք» ասելով ցանկանում էր իր բեռը նրանց վրայ դնել: Այդպէս կապեց իր ծանր բեռը առաքեալների պարանոցին եւ ոչ թէ ասաց՝ «խնդրէք ինձ հետ», եւ այդ պատճառով էլ օգուտ չստացաւ: Ինքը մեղք գործեց, իսկ ապաշխարութիւնն առաքեալների ուսերին բարձեց:

Աստուածաբան այրերի խօսքի համաձայն՝ ով անձամբ է գործում, Աստուած չի անտեսում նրան, բախողի համար բացում է, ընթացողին օգնում է,

որ տեղ հասնի: Բայց՝ սա բնաւ չի վերաբերում ծոյլերին: Սուրբ Եսայի հայրը գնաց մի հողագործից ցորեն խնդրեց, իսկ նա ասաց՝ «Արդեօք դու իմ հնձողներից մե՞կն ես»: Եսային ասաց՝ ոչ: Երկրագործն էլ պատասխանեց՝ «Այդ դէպքում ինչու՞ ես ինձանից ցորեն խնդրում, երբ դու չես աշխատել»: Սուրբ ծերն ասաց. «Ով չի աշխատում ցորեն չի՞ ստանում»: Երկրագործը պատասխանեց՝ ոչ: Հեռացաւ Եսային եւ իր աշակերտներին պատուիրեց՝ «Ով չաշխատի, չի վարձատրուի»:

Առասպելներում պատմւում է, թէ մի պատանի էշին հեծած գնում էր, իսկ նրա ծերացած հայրը ոտքով էր ընթանում: Էշը յանկարծ կանգ է առնում, եւ պատանին ասում է հօրը. «Հա՛յր, չո՛ւ ասա սրան»: Հայրը պատասխանում է՝ «Որդի՛ս, իմ ասելու փոխարէն դու ասա»: Սա նման է այն ջուլհակ կնոջը, որ միշտ աղաչում էր Աստուածածնին, թէ՝ «Ո՛վ Տիրամայր, իմ կտաւը հինի՛ր», բայց ինքը ձեռքը չէր շարժում: Երեւաց Աստուածածինն ու ասաց. «Քո՛յր իմ, ես քո կտաւը կհինեմ, միայն թէ դու գոնէ ձեռքդ տար ու բեր»: Սա նման է նաեւ այն պատմութեանը, երբ մէկը ջորեպանից ջորի է վարձում բեռը կրելու համար, հեծնում է, սակայն ջորին չի շարժւում: Ջորեպանն ասում է նրան. «Ա՛յ մարդ, ախար էս կենդանուն չու ասա»: Իսկ նա ասում է՝ «Լսի՛ր, ես քեզ հետ բեռը կրելու համար եմ պայման կապել եւ ոչ թէ չու ասելու»: Իսկ ջորեպանը պատասխանում է՝

«Հասկացանք պայման ես կապել, բայց գոնէ մի թեթեւ չո՛ւ ասա»...

Այս բոլոր օրինակներից ի՞նչ հետեւութիւն պէտք է անենք. ոչ թէ պէտք է միայն ապաւինենք այլոց աղօթքներին, այլ անձամբ ջանք թափենք: Պետրոս Առաքեալն ասաց Սիմոն մոգին՝ «Ապաշխարի՛ր», իսկ նա ասաց՝ «Դո՛ւք աղաչէք ինձ համար»: Մի՞թե այս պատասխանը հարիր է Պետրոսի ասածին: Ես ասում եմ՝ «զղջա՛, մեղքից հեռո՛ւ մնա», իսկ նա ասում է՝ «աղօթք արա ինձ համար հայր սուրբ»: Ես կտաւդ կհինեմ, իսկ դու ձեռքդ տար ու բեր: Դու հաւատու՞մ ես, թէ իմ աղօթքները քեզ օգտակար կլինեն.- եթէ հաւատայիր, ապա իմ գործերին չէիր ապաւինի՝ թէ աղօթք արա ինձ համար: Մտքումդ մեռած հաւատ ունես, իսկ ինձ կամենում ես «կենդանի» գործի դնել:

Արիստիպոս փիլիսոփայի մօտ տարան մի տղայի ու գովեցին, թէ՝ յոյժ խելացի է եւ համեստ: Իսկ նա ասաց. «Ուրեմն իմ կարիքն այլեւս չունի»: Իսկ ես էլ քեզ՝ իմ ջերմեռանդ աղօթքների կարիքն ունեցողիդ ասում եմ. հաւատու՞մ ես, թէ իմ աղօթքները կարող են օգնել քեզ, այդ դէպքում կենդանի հաւատք ունես, եւ ուրեմն ինչու՞ ես իմ կարիքը զգում: Բայց եթէ կենդանի հաւատք չունես քո մէջ, էլ ինչու՞ ես առանց հաւատքի իմ աղօթքի վրայ յոյս դնում, քանզի **մարդու հաւատքն այնքան է, որքան նրա գործերն են**:

Սուրբերի աղօթքը կարող է օգնել մեզ, բայց միայն այն դէպքում, եթէ մենք էլ ջանքեր գործադրենք,- ասում է Ոսկեբերանը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա) ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆԻ ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

Մատենագիր, եկեղեցական գործիչ Յակոբ Նալեանը ծնուել է 1706 թ., Արեւմտեան Հայաստանի Ջիմարրա գիւղաքաղաքում, որը գտնւում է Տիւրիկից հիւսիս-արեւելք՝ Եփրատի աջ ափին: 14 տարեկանում մեկնել է Կ. Պոլիս եւ ընդունուել Յովհաննէս Կոլոտ պատրիարքի հիմնած Սկիւտարի դպրատունը:

1728թ. ձեռնադրուել է աբեղայ: Իբրեւ եպիսկոպոս առաջին անգամ յիշատակուել է 1730թ.: Յովհ. Կոլոտ պատրիարքի կողմից ուղարկուել է Երուսաղէմ, Գրիգոր Շղթայակիր պատրիարքին օժանդակելու: 1741թ., երբ մահացել է Յովհաննէս Կոլոտ պատրիարքը, համաձայն վերջինիս կտակի՝ Նալեանը գլխաւորել է Պոլսոյ հայոց պատրիարքութիւնը, գահակալելով մինչեւ 1749թ.: Երկրորդ անգամ Կ. Պոլսի պատրիարք է ընտրուել 1762թ. ու գահակալել միայն երկու տարի: Պայքարել է կաթոլիկ եկեղեցու ազդեցութեան դէմ եւ ձգտել հայութեանը համախմբել Հայց. եկեղեցու շուրջը: Հիմնադրել է Կ. Պոլսի Գումգափու թաղի Մայր դպրատունը եւ դասաւանդել այնտեղ:

Նրա աշխատությունները հիմնականում ունեն աստվածաբանական-դավանաբանական բնոյթ: Առանձնակի արժէքաւոր է Գրիգոր Նարեկացու

«Մատեան ողբերգութեան»-ը նուիրուած մեկնութիւնը, որտեղ փորձ է արուած քննելու Նարեկի աստուածաբանական, գրական-աղբիւրագիտական հիմունքները: Յ. Նալեանի առաջաբանով առաջին անգամ հրատարակուել է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ը (1762թ.):

Յակոբ Նալեանը մահացել է Կ. Պոլսում 1764 թ., թաղուել Բերա թաղամասի գերեզմանատանը, Յակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի գերեզմանի հարեւանութեամբ:

Բ) ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վէմ հաւատոյ, 1733:
Քրիստոնէական ուսանելի կամ քրիստնէից վարժիչ, 1837:
Գիրք մեկնութեան աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, հատոր 1-2, 1745:
Գրքուկս կոչեցեալ հոգեշահ, 1746:
Քրիստոնէական ուսանելի: Աշխարհաբար, 1747:
Ճրագ ճշմարտութեան, 1756:
Ջէն հոգեւոր, 1757:
Գանձարան Ծանուցմանց, 1758:
Գիրք աղօթից ամենայն անձանց հարկաւոր, 1760:
Տետրակ զունայնութենէ կենցաղոյս, 1805:
Մեկնութիւն Հայր մերի (ձեռագիր)
Մեկնութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ (ձեռագիր)

Մեկնութիւն բարոյական փիլիսոփայութեան (ձեռագիր)

Գ) ԵՐԿԵՐ ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Այվազեան Ա., Նալեան Պատրիարքի կեանքէն, «Արեւելեան մամուլ», Իզմիր, 1894, թ. 15:
Բամբուճեան Գ., Յակոբ Պատիարք Նալեան, Ստամպուլ, 1981:
Քեոսէեան Յ., Յակոբ Նալեան Պատրիարքը՝ գրոց գիւտի եւ թարգմանչաց մասին, «Էջմիածին» հանդէս, 2005, թ. Բ-Գ:
Քրիստոնեայ Հայաստան, Եր., 2002:
Յակոբ Պատրիարք Նալեան, Հոգեւոր զրոյցներ, Ս. Էջմիածին, 2013:

Դ) ՍՈՅՆ ՀԱՏՈՐԻ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԸ

Յակոբ Նալեանի «Գանձարան ծանուցմանց» գրքի տարբեր հատուածներ, որոնք տեղ են գտել այս գրքոյկում, թարգմանել են հետեւեալ հեղինակները.

Պօղոսեան Նորայր

- Այն մասին, որ բարիք գործելը չպէտք է յաջորդ օրուան թողնել

- Խեղկատակութիւնները անպատեհ են քրիստոնեայի համար
- Պարսաւելի ու երկար-բարակ շատախօսութեան մասին

Արզումանեան Ռուբիկ սրկ.

- Դժոխքում սպասուող տանջանքների ստուգութեան մասին
- Աշխատանքի օգտակարութեան եւ ծուլութեան վնասակարութեան մասին

Աւետիսեան Անուշ

- Երաշտի եւ այլ պատուհասների ժամանակ աղօթելու մասին

Բաղդասարեան Վանանդ սրկ.

- Այն մասին, որ եթէ առաքինութիւնից որեւէ բան պակաս լինի, Տէրը մարդուն դուրս կթողնի արքայութիւնից
- Այն մասին, որ եթէ մէկն անձամբ կարող է հոգալ իր փրկութիւնը, չպէտք է այն ուրիշներին յանձնի

Բաղմանեան Վանուհի

- Այն մասին, թէ ինչպիսի կնոջ հետ է պէտք ամուսնանալ, եւ այր ու կին ինչ յատկանիշներ պիտի ունենան

Բարսեղեան Մելքոն սրկ.

- Բոլոր վշտացեալների եւ հիւանդների առողջութեան համար փութով աստծուն աղօթելու մասին

Հագէեան Մարգար սրկ.

- Այն մասին, որ որեւէ մէկին չպէտք է գայթակղեցնել...

Համբարձումեան Զինա

- Այն մասին, որ զանազան փորձութիւններն ու դիպուածները չեն կարող խափանել առաքինութեան ընթացքը

Յովհաննիսեան Անահիտ

- Ընկերների եւ ընտանիքի փրկութեան համար հոգ տանելու մասին

Յովհաննիսեան Գագիկ սրկ.

- Ծովով եւ ցամաքով ճանապարհորդողների համար աղօթելու մասին
- Տղամարդուն եւ կնոջը՝ թէ ինչպէս պէտք է իրար սիրեն

Նուրիջանեան Գեղամ

- Համեստութիւնը բոլոր յատկութիւնների զարդարանքն ու փառքն է

Պօղոսեան Արշակ

- Նրանց մասին, ովքեր արտաքուստ քրիստոնեայ են, իսկ ներքուստ՝ սատանայ

Սահակեան Վահան սրկ.

- Այն մասին, որ պէտք չէ այլոց անկման կամ անյաջողութեան վրայ ուրախանալ
- Որքա՜ն հաճելի է Աստծուն, երբ մէկը մեծ է կոչումով, բայց ծառայում է այլոց
- Ո՞վ կարող է երջանիկ համարուել, եւ երջանկութեան քանի՞ տեսակ կայ

Ստեփանեան Գեւորգ սրկ.

- Յուսադրութեան, օգնելու եւ փորձանքի մէջ ընկածներին մխիթարելու մասին

Բարի կենցաղավարութեան եւ առաքինի կեանքի մասին